ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԴԱՐ ՔՎԵ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդական ակումբների դաշնության

«ԱՐԴԱՐ ՔՎԵ» ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հիմնված երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների հաղորդումների, ինչպես նաև քաղաքացիների կողմից ներկայացված տեղեկությունների վրա)

Երևան, 17 հունիսի, 2026

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Երիտասարդական ակումբների դաշնության «Արդար քվե» դիտորդական առաքելությունը իրականացրել է 2026 թվականի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների անկախ, մասնագիտական և համապարփակ դիտարկում՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Դիտորդական առաքելության աշխատանքներին մասնակցել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված **368** դիտորդ, որոնց թվում՝ 40 երկարաժամկետ և ավելի քան 300 կարճաժամկետ դիտորդ: Դիտարկումն իրականացվել է ընտրական գործընթացի բոլոր փուլերում՝ նախընտրական ժամանակահատվածից մինչև քվեարկության օրը, ձայների հաշվարկը, արդյունքների ամփոփումը և հետընտրական զարգացումները:

Առաքելության կողմից արձանագրված բոլոր խախտումները ևահազանգերը հավաքագրվել ու հրապարակայնացվել են բաց և թափանցիկ եղանակով՝ **youthvote.live և արդարքվե.հայ** առցանց հարթակների, ինչպես նաև թեժ գծի (հեռախոսազանգ) միջոցով: Այդ հարթակները հասանելի են եղել ոչ միայն առաքելության դիտորդներին, այլև Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին՝ ապահովելով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության լրացուցիչ մեխանիզմ:

Դիտորդական առաքելությունը նախընտրական և ընտրական ամբողջ ժամանակահատվածում արձանագրել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին վերաբերող բազմաթիվ և բազմաբնույթ խախտումներ: Առավել մտահոգիչ են եղել վարչական ռեսուրսի համատարած օգտագործման, պետական և քաղաքական գործունեության սահմանների խախտման, պետական ու համայնքային ծառայողների քաղաքական ներգրավման, կրթական հաստատությունների քաղաքականացման, ընտրողների նկատմամբ ճնշման և ուղղորդման, ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումների, զինծառայողների մասնակցության կազմակերպման ընթացքում արձանագրված խնդիրների, ընտրական հանձնաժողովների աշխատանքի թերությունների, ինչպես նաև քաղաքական անհանդուրժողականության, ատելության խոսքի և բռնության սպառնալիքների տարածման դեպքերը:

Առաքելության գնահատմամբ՝ նշված խախտումները չեն կարող դիտարկվել մեկուսացված ձևով: Դրանց տարածվածությունը, կրկնվող բնույթը և համակարգային դրսևորումները պահանջում են գնահատել ոչ միայն յուրաքանչյուր առանձին միջադեպի իրավական հետևանքները, այլ նաև դրանց համակցված ազդեցությունը ընտրական գործընթացի ազատության, հավասարության և արդարության սկզբունքների վրա:

Հատկանշական է, որ ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո կայացված որոշումների հետևանքով շուրջ 3400 քաղաքացիների ձայները երեք ընտրատեղամասերում փաստացի դուրս են մնացել ընտրությունների վերջնական արդյունքների հաշվարկից: Միաժամանակ, զեկույցի համապատասխան բաժնում (8.2) ներկայացված են նաև շուրջ 60,000 քաղաքացիների ընտրական իրավունքների իրացման սահմանափակման վերաբերյալ առաքելության արձանագրած խնդիրները:

Այս հանգամանքների ամբողջական գնահատումը հիմք է տալիս եզրակացնելու, որ արձանագրված խախտումների ամբողջությունը կարող էր ունենալ էական ազդեցություն ընտրությունների վերջնական արդյունքների վրա, այդ թվում՝ խորհրդարանական մանդատների բաշխման վրա:

Դիտորդական առաքելությունը վերահաստատում է, որ ժողովրդավարական ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը կարող է վերականգնվել միայն բոլոր արձանագրված խախտումների ամբողջական և անկողմնակալ իրավական գնահատման արդյունքում:

Այս համատեքստում «Արդար քվե» դիտորդական առաքելությունը հույս է հայտնում, որ ընտրություններին մասնակցած բոլոր քաղաքական ուժերը՝ անկախ ընտրությունների պաշտոնական արդյունքներից, այդ թվում նաև իշխող քաղաքական ուժը, կօգտագործեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված իրավական մեխանիզմները և կդիմեն Սահմանադրական դատարան՝

ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վերականգնման և ընտրական արդարության ապահովման նպատակով:

Սույն զեկույցը ներկայացնում է նախընտրական շրջանի, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների ընթացքում արձանագրված փաստերը, դրանց իրավական գնահատականը և ընտրական համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել երկրի ներքաղաքական ակտիվ գործընթացների, հասարակության բարձր քաղաքական բևեռացման և անվտանգային լուրջ մարտահրավերների պայմաններում:

Երիտասարդական ակումբների դաշնության «Արդար քվե» դիտորդական առաքելության նպատակն էր իրականացնել անկախ, անկողմնակալ և մասնագիտական դիտարկում, նպաստել ընտրական գործընթացի թափանցիկությանը, արձանագրել ընտրական իրավունքի հնարավոր խախտումները և ապահովել քաղաքացիների մասնակցությունը ընտրական գործընթացի հանրային վերահսկողությանը:

Առաքելությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներով և ընտրական գործընթացների դիտարկման լավագույն միջազգային փորձով:

Սույն զեկույցը ներկայացնում է նախընտրական ժամանակահատվածի, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների ընթացքում արձանագրված փաստերը, դրանց իրավական գնահատականը և ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ապահովման նպատակով ներկայացվող եզրակացություններն ու առաջարկությունները:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Արդար քվե» դիտորդական առաքելությունը դիտարկումն իրականացրել է համապարփակ և բազմաաղբյուր մեթոդաբանությամբ: Դիտարկման հիմնական

գործիքներից է եղել **արդարքվե.հայ / youthvote.live** առցանց հարթակը, որը հնարավորություն է տվել իրական ժամանակում հավաքագրել, համակարգել և հանրայնացնել դիտորդների ու քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդումները:

Դիտորդական առաքելության կազմում ընդգրկված են եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված 368 դիտորդներ, որոնց թվում՝ 40 երկարաժամկետ և ավելի քան 300 կարճաժամկետ դիտորդներ:

Երկարաժամկետ դիտորդներն իրականացրել են նախընտրական միջավայրի մշտադիտարկում՝ հետևելով քաղաքական ուժերի գործունեությանը, պետական և համայնքային մարմինների մասնակցությանը ընտրական գործընթացներին, ընտրական հանձնաժողովների աշխատանքին, զանգվածային լրատվամիջոցների գործունեությանը և ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ տեղեկություններին:

Կարճաժամկետ դիտորդները հետևել են քվեարկության օրվա բոլոր հիմնական փուլերին՝ ընտրատեղամասերի բացումից մինչև ձայների հաշվարկը և արդյունքների ամփոփումը:

Տեղեկատվության հավաքագրման աղբյուրներն են եղել դիտորդների գրավոր հաղորդումները, քաղաքացիների ահազանգերը, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, պետական մարմինների պաշտոնական հաղորդագրությունները, ինչպես նաև **արդարքվե.հայ**, youthvote.live և fyca.net հարթակներում և թեժ գծի (010588768) միջոցով ստացված տեղեկությունները:

Յուրաքանչյուր հաղորդում ենթարկվել է նախնական փաստական և իրավական գնահատման: Միաժամանակ առաքելությունը տարբերակել է դիտորդների կողմից անմիջականորեն արձանագրված փաստերը և այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները՝ պահպանելով օբյեկտիվության և մասնագիտական գնահատման սկզբունքները:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2026 թվականի Ազգային ժողովի ընտրական գործընթացը տեղի է ունեցել բարձր քաղաքական մրցակցության, խորացված հասարակական բևեռացման և քաղաքական հակառակորդների նկատմամբ անհանդուրժողական ու հաճախ ագրեսիվ հռետորաբանության պայմաններում:

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված խախտումները և ստացված բազմաթիվ հաղորդումները վկայում են, որ ընտրական գործընթացը ուղեկցվել է պետական և քաղաքական գործունեության սահմանների խախտման, վարչական

ռեսուրսի լայնածավալ օգտագործման, պետական և համայնքային ծառայողների քաղաքական ներգրավման, ընտրողների նկատմամբ ազդեցության և ուղղորդման փորձերի, ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ ահազանգերի, ինչպես նաև քաղաքական ատելության խոսքի ու սպառնալիքների տարածման դեպքերով:

Առաքելությունը արձանագրում է, որ նմանատիպ խախտումների զգալի մասը կրել է կրկնվող և համակարգային բնույթ: Դրանց գնահատումը չի կարող սահմանափակվել առանձին միջադեպերի ուսումնասիրությամբ, քանի որ դրանց ամբողջությունը կարող էր ազդել ընտրական մրցակցության հավասարության, ընտրողների ազատ կամարտահայտման և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա:

Առաքելության գնահատմամբ՝ ժողովրդավարական ընտրությունների ապահովման համար պետությունը պարտավոր է երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ, պետական կառավարման համակարգի քաղաքական չեզոքություն, ընտրողների ազատ կամարտահայտման պաշտպանություն և ընտրական գործընթացի նկատմամբ արդյունավետ իրավական վերահսկողություն:

Հետևաբար ընտրական գործընթացի վերջնական գնահատականը պետք է հիմնված լինի ոչ միայն քվեարկության օրվա կազմակերպման, այլև նախընտրական միջավայրի, քվեարկության ընթացքում արձանագրված խախտումների, արդյունքների ամփոփման և հետընտրական իրավական գործընթացների ամբողջական գնահատման վրա:

4. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆԱԽՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

4.1. Ընդհանուր նկարագիր

ԵԱԴ «Արդար քվե» դիտորդական առաքելության երկարաժամկետ դիտորդները նախընտրական ժամանակահատվածում իրականացրել են ընտրական միջավայրի մշտադիտարկում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Դիտորդական առաքելության կողմից արձանագրվել են բազմաթիվ դեպքեր և ստացվել են զգալի թվով հաղորդումներ, որոնք վերաբերել են ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին առնչվող խախտումներին: Դրանք ներառել են վարչական ռեսուրսի օգտագործումը, պետական և համայնքային պաշտոնատար անձանց մասնակցությունը քարոզչական գործընթացներին, ընտրողների նկատմամբ ճնշման և

ազդեցության փորձերը, ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդումները, քաղաքական մրցակցության անհավասար պայմանները, ատելության խոսքի տարածումը և ընտրական գործընթացի մասնակիցների իրավունքների սահմանափակման դեպքերը:

Առաքելությունը արձանագրում է, որ նախընտրական փուլում արձանագրված մի շարք խախտումներ ունեցել են ոչ թե առանձին, այլ կրկնվող և համակարգային բնույթ, ինչը լրջորեն ազդել է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության և քաղաքական ուժերի միջև հավասար մրցակցության պայմանների վրա:

4.2. Վարչական ռեսուրսի օգտագործում

Դիտորդական առաքելությունը բազմաթիվ հաղորդումներ է ստացել պետական և համայնքային ռեսուրսների, պաշտոնական դիրքի և վարչական ազդեցության կիրառման վերաբերյալ:

Արձանագրված դեպքերը ներառել են պետական և համայնքային ծառայողների ներգրավումը քարոզչական միջոցառումներում, պաշտոնատար անձանց մասնակցությունը կուսակցական գործունեությանը, ենթակաների նկատմամբ հնարավոր ազդեցության և ճնշման դրսևորումները, ինչպես նաև պետական կառավարման համակարգի և իշխող քաղաքական ուժի գործունեության միջև սահմանների խախտման դեպքերը:

Վարչական ռեսուրսի նման կիրառումը անհամատեղելի է պետական չեզոքության սկզբունքի հետ և խաթարում է ընտրական մրցակցության հավասար պայմանները:

4.3. Հանրային և կրթական հաստատությունների քաղաքականացում

Նախընտրական շրջանում առաքելությունը արձանագրել է կրթական և այլ հանրային հաստատությունների աշխատակիցների ու սովորողների ներգրավման դեպքեր քաղաքական գործընթացներում:

Մասնավորապես արձանագրվել են ուսուցիչների, դպրոցականների և այլ հանրային հաստատությունների ներկայացուցիչների մասնակցության դեպքեր քարոզչական միջոցառումներին, այդ թվում՝ այնպիսի իրավիճակներում, որոնք կարող էին ընկալվել որպես վարչական ազդեցության հետևանք:

Հանրային և հատկապես կրթական միջավայրի քաղաքականացումը հակասում է պետական հաստատությունների չեզոքության սկզբունքին և կարող է բացասաբար անդրադառնալ ազատ քաղաքական մասնակցության միջավայրի վրա:

4.4. Ատելության խոսք, սպառնալիքներ և քաղաքական անհանդուրժողականություն

Նախընտրական քարոզարշավը ուղեկցվել է քաղաքական ուժերի և առանձին պաշտոնատար անձանց կողմից կոշտ, վիրավորական և երբեմն սպառնալիք պարունակող հռետորաբանությամբ։

Առաքելության գնահատմամբ՝ քաղաքական ատելության խոսքի, վիրավորանքների և բռնության ենթատեքստ ունեցող հայտարարությունների տարածումը ձևավորել է լարված և բևեռացված միջավայր, որը չի նպաստել գաղափարների ազատ և քաղաքակիրթ մրցակցությանը։

Ժողովրդավարական ընտրությունների պայմաններում քաղաքական բանավեճը պետք է հիմնված լինի ծրագրային քննարկումների, այլ ոչ թե հակառակորդների արժանապատվության նսեմացման և հասարակության բաժանման վրա։

4.5. Ընտրողների նկատմամբ ճնշում և ազդեցություն

Դիտորդական առաքելությունը ստացել է բազմաթիվ հաղորդումներ ընտրողների նկատմամբ ուղղակի և անուղղակի ազդեցության փորձերի վերաբերյալ։

Արձանագրված դեպքերը ներառել են պետական աշխատողների նկատմամբ ճնշման մասին հաղորդումներ, քաղաքական նախասիրությունների վերաբերյալ տվյալների հավաքագրում, ընտրողների ուղղորդում, ինչպես նաև վախի և կախվածության մթնոլորտ ձևավորող հայտարարություններ։

Նման գործողությունները վտանգում են ընտրողի ազատ կամարտահայտման իրավունքը և ընտրությունների ազատության սկզբունքը։

4.6. Ընտրակաշառքի վերաբերյալ հաղորդումներ

Նախընտրական շրջանում առաքելությունը ստացել է ընտրակաշառքի հնարավոր դեպքերի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ, որոնք վերաբերել են տարբեր քաղաքական դերակատարների։

Դրանք ներառել են դրամական խրախուսումների, նյութական բարիքների տրամադրման, սոցիալական աջակցությունների քաղաքական նպատակներով

օգտագործման և ընտրողների վարքագծի վրա ազդելու հնարավոր այլ մեխանիզմների վերաբերյալ տեղեկություններ:

Առաքելությունը կարևորում է ընտրակաշառքի վերաբերյալ բոլոր հաղորդումների լիարժեք, արագ և անկողմնակալ քննությունը՝ անկախ այն հանգամանքից, թե որ քաղաքական ուժի ներկայացուցիչներն են դրանց առնչվում:

4.7. Քաղաքական մրցակցության անհավասար պայմաններ

Առաքելությունը արձանագրել է դեպքեր, որոնք կարող են վկայել քաղաքական ուժերի համար հավասար հնարավորությունների սկզբունքի խախտման մասին:

Մասնավորապես ուշադրության են արժանի ընդդիմադիր քաղաքական ուժերի գործունեության սահմանափակման, քարոզչական գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաև պետական մարմինների գործողությունների նկատմամբ ընտրողական մոտեցման վերաբերյալ հաղորդումները:

Ազատ և արդար ընտրությունների ապահովման կարևորագույն նախապայմաններից է բոլոր քաղաքական ուժերի համար հավասար և կանխատեսելի իրավական միջավայրի ապահովումը:

4.8. Դիտորդների, լրագրողների և քաղաքացիական հասարակության գործունեության սահմանափակում

Առաքելության կողմից արձանագրվել են դիտորդների և ընտրական գործընթացը լուսաբանող անձանց գործունեությանը խոչընդոտելու դեպքեր:

Դրանք ներառել են դիտորդական գործունեության սահմանափակում, տեղեկատվության հասանելիության խնդիրներ և ընտրական գործընթացի նկատմամբ հասարակական վերահսկողությունը սահմանափակող այլ գործողություններ:

Թափանցիկ և վստահելի ընտրական գործընթացը անհնար է առանց դիտորդների, լրագրողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ազատ և անարգել գործունեության:

4.9. Իրավապահ մարմինների գործողությունները

Նախընտրական շրջանում արձանագրվել են իրավապահ մարմինների գործողությունների նկատմամբ հասարակական մտահոգություններ,

մասնավորապես՝ տարբեր քաղաքական դերակատարների նկատմամբ արձագանքի համաչափության և հավասարության վերաբերյալ:

Առաքելությունը գտնում է, որ իրավապահ մարմինների ցանկացած գործողություն ընտրական գործընթացի ընթացքում պետք է լինի բացառապես օրենքով պայմանավորված, քաղաքականապես չեզոք և հավասարապես կիրառելի բոլոր կողմերի նկատմամբ:

4.10. Ընտրական վարչարարության հետ կապված խնդիրներ

Առաքելությունը ստացել է ընտրական հանձնաժողովների աշխատանքի, ընտրական գործընթացի կազմակերպման և առանձին վարչարարական խնդիրների վերաբերյալ հաղորդումներ:

Չնայած ընտրական մարմինների կողմից իրականացված կազմակերպչական աշխատանքներին, արձանագրված խնդիրները ցույց են տալիս հանձնաժողովների անկախության, պատրաստվածության և արձագանքման արդյունավետության հետ կապված բարելավումների անհրաժեշտությունը:

4.11. Նախընտրական ժամանակահատվածի ընդհանուր գնահատական

Դիտորդական առաքելության գնահատմամբ՝ նախընտրական ժամանակահատվածը բնութագրվել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին առնչվող բազմաթիվ և բազմաշերտ խնդիրներով:

Վարչական ռեսուրսի լայնածավալ կիրառումը, պետական կառավարման համակարգի և իշխող քաղաքական ուժի գործունեության միջև սահմանների խաթարումը, քաղաքական անհանդուրժողականության և ատելության խոսքի տարածումը, ընտրողների նկատմամբ ազդեցության փորձերը, ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումները և քաղաքական մրցակցության հավասար պայմանների վերաբերյալ մտահոգությունները ստեղծել են անհավասար ընտրական միջավայր:

Թեև առանձին դեպքերի իրավական գնահատականը ենթակա է իրավասու մարմինների քննությանը, արձանագրված փաստերի ամբողջությունը վկայում է, որ նախընտրական փուլում առկա են եղել համակարգային խնդիրներ, որոնք կարող էին

էական ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի ազատության, արդարության և մրցակցային բնույթի վրա։

5. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԷԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5.1. Ընդհանուր իրավական մոտեցում

Ընտրությունների օրինականության գնահատումը չի կարող սահմանափակվել միայն քվեարկության օրվա ընթացակարգային համապատասխանությամբ։ Ժողովրդավարական ընտրությունների իրավական գնահատականը պետք է հիմնված լինի ընտրական գործընթացի ամբողջական դիտարկման վրա՝ ներառյալ նախընտրական միջավայրը, քաղաքական մրցակցության պայմանները, պետական իշխանության չեզոքության ապահովումը, ընտրողների ազատ կամարտահայտման հնարավորությունը, քվեարկության, ձայների հաշվարկի և արդյունքների ամփոփման գործընթացները։

Ընտրական իրավունքի միջազգային սկզբունքների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ընտրությունները պետք է լինեն ոչ միայն տեխնիկապես կազմակերպված, այլ նաև ազատ, արդար և իրական քաղաքական մրցակցության պայմաններում անցկացված։

Հետևաբար ընտրական գործընթացում արձանագրված բազմաթիվ խախտումների գնահատումը պետք է կատարվի դրանց ամբողջական ազդեցության տեսանկյունից՝ հաշվի առնելով ոչ միայն յուրաքանչյուր առանձին խախտման ծավալը, այլ նաև դրանց տարածվածությունը, կրկնվող բնույթը և ընտրողների ազատ կամարտահայտության ու քաղաքական հավասարության վրա թողած ազդեցությունը։

5.2. Պետության քաղաքական չեզոքության և վարչական ռեսուրսի կիրառման սկզբունքի խախտումներ

Ժողովրդավարական ընտրությունների հիմնարար պահանջներից է պետական մարմինների, պաշտոնատար անձանց և հանրային ռեսուրսների քաղաքական չեզոքությունը։

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված դեպքերը ցույց են տալիս, որ նախընտրական ժամանակահատվածում բազմաթիվ դեպքերում խաթարվել են պետական գործունեության և իշխող քաղաքական ուժի նախընտրական գործունեության սահմանները։ Պետական և համայնքային ծառայողների ներգրավումը քարոզչական գործընթացներում, պաշտոնեական դիրքի ազդեցության

օգտագործման վերաբերյալ հաղորդումները և վարչական կախվածության միջավայրի ձևավորումը հակասում են ազատ և հավասար ընտրությունների սկզբունքին:

Վարչական ռեսուրսի լայնածավալ կիրառումը, հատկապես այն դեպքերում, երբ այն իրականացվում է պետական կառավարման տարբեր մակարդակներում, կարող է էական ազդեցություն ունենալ քաղաքական մրցակցության հավասարության վրա:

5.3. Ընտրողների ազատ կամարտահայտման իրավունքի սահմանափակումներ

Ընտրական իրավունքի առանցքային սկզբունքներից է ընտրողի ազատ կամարտահայտման երաշխավորումը՝ առանց ճնշման, հարկադրանքի, նյութական կամ վարչական ազդեցության:

Առաքելության կողմից արձանագրված ընտրողների նկատմամբ ճնշման, ուղղորդման, վերահսկման, տվյալների հավաքագրման, ինչպես նաև ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումները վկայում են, որ ընտրողների ազատ ընտրություն կատարելու միջավայրի ապահովումը եղել է ընտրական գործընթացի հիմնական մարտահրավերներից մեկը:

Հատկապես մտահոգիչ են այն դեպքերը, երբ ընտրողի կամարտահայտության վրա ազդեցությունը կարող է պայմանավորված լինել նրա աշխատանքային, սոցիալական կամ վարչական կախվածությամբ, քանի որ նման պայմաններում ընտրության ազատությունը դառնում է ձևական:

5.4. Քաղաքական մրցակցության հավասարության սկզբունքի խախտումներ

Ազատ ընտրությունները ենթադրում են, որ բոլոր քաղաքական ուժերը պետք է ունենան հավասար հնարավորություններ իրենց ծրագրերը ներկայացնելու և ընտրողների աջակցությունը ստանալու համար:

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված դեպքերը՝ ներառյալ ընդդիմադիր քաղաքական ուժերի գործունեության սահմանափակման վերաբերյալ հաղորդումները, իրավապահ մարմինների գործողությունների նկատմամբ ընտրողականության մասին մտահոգությունները, ինչպես նաև պետական կառույցների և իշխող քաղաքական ուժի գործունեության միջև սահմանների խախտումները, կասկածի տակ են դնում քաղաքական մրցակցության հավասար պայմանների լիարժեք ապահովումը:

5.5. Քաղաքական ատելության խոսքի և սպառնալիքների ազդեցությունը ընտրական միջավայրի վրա

Ժողովրդավարական ընտրությունները պահանջում են այնպիսի հանրային միջավայր, որտեղ քաղաքական մրցակցությունն իրականացվում է փոխադարձ հարգանքի և բռնությունից զերծ քննարկման պայմաններում:

Քարոզարշավի ընթացքում արձանագրված վիրավորական, նվաստացնող և սպառնալիքի տարրեր պարունակող քաղաքական խոսույթը նպաստել է հասարակության բևեռացման խորացմանը և ստեղծել է լարված մթնոլորտ, որը բացասաբար է անդրադարձել ազատ քաղաքական քննարկումների միջավայրի վրա:

Հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, երբ նման հռետորաբանությունը հնչում է պետական բարձր պաշտոն զբաղեցնող անձանց կողմից, քանի որ այն կարող է ունենալ անհամեմատ մեծ ազդեցություն հանրային միջավայրի և ընտրողների ընկալումների վրա:

5.6. Ընտրական գործընթացում իրավապահ մարմինների դերի գնահատում

Իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ հանրային վստահությունը ընտրական գործընթացի օրինականության կարևորագույն նախապայմաններից է:

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված դեպքերը, որոնք վերաբերում են տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների նկատմամբ իրավական արձագանքի անհավասարության վերաբերյալ մտահոգություններին, պահանջում են առանձնահատուկ ուշադրություն: Ընտրական գործընթացում իրավապահ մարմինների ցանկացած գործողություն պետք է հիմնված լինի բացառապես օրենքի պահանջների վրա և բացառի քաղաքական կողմնակալության որևէ ընկալում:

Ընտրական գործընթացի նկատմամբ վստահության վերականգնման համար անհրաժեշտ է, որպեսզի իրավապահ մարմինների գործողությունների համաչափությունը և անկողմնակալությունը ենթարկվեն արդյունավետ հանրային և իրավական գնահատման:

5.7. Ընտրական վարչարարության և ընտրական հանձնաժողովների գործունեության գնահատում

Ընտրական հանձնաժողովների անկախ և պրոֆեսիոնալ գործունեությունը ընտրությունների օրինականության կարևորագույն երաշխիքներից է:

Առաքելության կողմից արձանագրված խախտումները, որոնք վերաբերում են հանձնաժողովների կողմից խախտումների արձանագրումից հրաժարվելուն, ընթացակարգային թերություններին, դիտորդների իրավունքների սահմանափակմանը և որոշ դեպքերում հանձնաժողովների անդամների ոչ բավարար պատրաստվածությանը, վկայում են ընտրական վարչարարության արդյունավետության հետ կապված լուրջ խնդիրների մասին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ընտրական հանձնաժողովների կողմից ակնհայտ խախտումների նկատմամբ ոչ պատշաճ արձագանքը կարող է հանգեցնել խախտումների անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը և նվազեցնել ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահությունը:

5.8. Ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի ապահովման խնդիրներ

Ընտրելու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունքներից է, և պետության պարտավորությունն է ապահովել, որ յուրաքանչյուր ընտրող ունենա իր ընտրական իրավունքն արդյունավետ իրացնելու հնարավորություն:

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված ընտրողների ցուցակների անճշտությունները, ընտրության մասնակցության հնարավոր սահմանափակումները, ընտրատեղամասերի մատչելիության խնդիրները և ընտրական գործընթացում առաջացած այլ խոչընդոտները վկայում են ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի լիարժեք ապահովման հետ կապված լուրջ խնդիրների մասին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված մի շարք վարչարարական և կազմակերպչական խնդիրներ հանգեցրել են քաղաքացիների՝ իրենց ընտրական իրավունքը լիարժեք իրացնելու հնարավորության սահմանափակմանը: Այս համատեքստում առանձնահատուկ իրավական գնահատման կարիք ունի նաև այն հանգամանքը, որ շուրջ 60,000 քաղաքացիներ զրկվել են ընտրություններին մասնակցելու հնարավորությունից, ինչպես նաև հետընտրական փուլում երեք ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչման հետևանքով շուրջ 3,400 քաղաքացիների տրված ձայները դուրս են մնացել ընտրությունների վերջնական արդյունքների հաշվարկից:

Ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի ցանկացած սահմանափակում պետք է ենթարկվի խիստ իրավական գնահատման, քանի որ այն անմիջականորեն առնչվում է ժողովրդական ներկայացուցչության լեգիտիմության հարցին:

5.9. Խախտումների հնարավոր համակարգային բնույթը

Առանձին դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրված բազմաթիվ միջադեպեր վերաբերել են նույն բնույթի խնդիրներին:

Դրանց թվում են.

• վարչական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ հաղորդումները,

• պետական ծառայողների քաղաքական ներգրավվածությունը,

• ընտրողների նկատմամբ ազդեցության հնարավոր փորձերը, ընտրակաշառքը,

• քաղաքական անհանդուրժողականության դրսևորումները,

• պետական և քաղաքական գործունեության սահմանների խախտման վերաբերյալ տեղեկությունները:

Առաքելության գնահատմամբ՝ նմանատիպ դեպքերի բազմակի կրկնությունը պահանջում է ոչ միայն առանձին միջադեպերի, այլև դրանց ամբողջության գնահատում:

Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը կախված է ոչ միայն իրավական արձագանքից, այլ նաև հանրության համոզվածությունից, որ ընտրական մրցակցությունը տեղի է ունենում հավասար և արդար պայմաններում:

Նախընտրական շրջանում դիտորդական առաքելության գրանցած դեպքերն ու հաղորդումները ներկայացվում են 1.1 - 1.15 հավելվածներում. դրանք խմբավորված են ըստ հետևյալ կատեգորիաների.

#	Հաղորդումների կատեգորիա	քանակ
1	Ապօրինի քարոզչություն	154
2	Վարչական ռեսուրսի օգտագործում	114
3	Թշնամանքի հրահրում	47
4	Ճնշում իշխանության կամ տեղական ինքնակառավարմանմարմինների կողմից	27
5	Ընտրակաշառք	26

6	Բարեգործական գործունեություն, որը կապված է ընտրությունների հետ	15
7	Ճնշում և ահաբեկում ընտրողների նկատմամբ	13
8	Անհավասար հնարավորությունների ստեղծում կուսակցությունների (դաշինքների) համար	8
9	Ոստիկանության արձագանքը վեճերին և միջադեպերին՝ կախված խախտողների քաղաքական հայացքներից	10
10	Երրորդ անձանց կողմից մասնակցությանվերահսկում, ցուցակների կազմում, մասնակցության վերաբերյալ հաշվետվություն	6
11	Դիտորդի իրավունքների խախտում	2
12	Տեղամասում քվեարկության նախորդ օրվա խախտումներ	2
13	Ճնշում աշխատավայրից	1
14	Տեղամասի կահավորման խախտումներ	1
15	Խախտումներ ՏԸՀ աշխատանքում	1

Հիմնական արձանագրումներ ըստ կատեգորիաների

1. Ապօրինի քարոզչություն

Արձանագրվել են քարոզչական գործունեության կանոնների բազմաթիվ խախտումներ.

Քարոզչական նյութերի տեղադրման խախտումներ՝ դեպքերի զգալի մասը վերաբերում է օրենքով չնախատեսված վայրերում քարոզչական պաստառների փակցմանը (դեպքեր #4, #5, #6, #11, #13, #19-23, #26, #28-31, #37, #39-43, #45, #47-50, #52-53, #56-61, #63-67, #69-70, #77, #79-83, #85-87, #89-98, #100-103, #105-107, #112, #117-119, #121, #125, #127-130, #134-139, #141-149, #151-154):

- Առևտրային օբյեկտների, հասարակական սննդի կետերի վրա փակցված պաստառներ
- Բնակելի շենքերի արտաքին պատերին, էլեկտրասյուներին, կանգառներում տեղադրում

- Ընտրատեղամասերին հարակից տարածքներում (50 մետր շառավղով) քարոզչություն

«Լռության օրվա» խախտումներ (#1, #7, #8, #9, #10)՝ քարոզչության շարունակում քվեարկությունից մեկ օր առաջ, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից:

Քարոզչական նյութերի վնասում (#2, #3, #12, #14-16, #18, #25, #27, #38, #46, #51, #71-72, #74, #77-78, #84, #88, #108, #113, #116, #120, #124, #132-133, #140):

Անչափահասների ներգրավում քարոզչությանը (#24, #34, #35, #114, #117, #122)՝ դպրոցականների և ուսուցիչների կազմակերպված մասնակցություն քարոզարշավներին, կուսակցական խորհրդանիշներով շապիկներ:

2. Վարչական ռեսուրսի օգտագործում

Խախտումների առավել մտահոգիչ կատեգորիաներից մեկը: Արձանագրվել են հետևյալ դրսևորումները.

Պաշտոնատար անձանց անօրինական մասնակցություն (#1, #2, #4, #6-7, #9-10, #17, #28, #30-31, #34-35, #37-38, #41, #45, #47, #54-56, #58, #63, #69, #71, #74-76, #80-81, #91, #100, #103-104, #106):

- Մարզպետների, համայնքապետերի, նախարարների մասնակցությունը քարոզարշավներին
- Աշխատանքային ժամին պետական/համայնքային աշխատողների կազմակերպված ներգրավում
- Ուսումնական հաստատությունների աշխատակիցների և աշակերտների մոբիլիզացում

Պետական հիմնարկների պաշտոնական էջերի օգտագործում (#3, #50-51, #59, #61, #68, #70, #83-85, #87-90, #105, #108-109):

- Կուսակցական քարոզչական նյութերի տարածում պաշտոնական սոցիալական էջերով
- Պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից քարոզչություն (#19-22, #26, #57, #79, #82, #92, #98, #107, #110-111)

Վաղաժամ քարոզչություն (#44, #50, #83-84, #111, #123, #126)՝ քարոզչության մեկնարկից առաջ կուսակցական նյութերի տարածում:

3. Թշնամանքի հրահրում և բռնության կոչեր

Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, որոնք պարունակում են ատելության խոսքի, սպառնալիքների և բռնության կոչերի տարրեր.

Բռնության և սպառնալիքների կոչեր (#1, #3-7, #9, #11-15, #17-42, #44-45, #47):

- «Ծնկի եմ բերելու ու կզցնելու եմ» (#18, #33)
- «Սատկացնելու եմ», «կտրելու եմ» (#27, #30, #36)
- «Պետության համը կոկորդիդ ա մնալու» (#41)
- «Տրորելով անցնելու ենք» (#42)

Ֆիզիկական բախումներ (#1, #3-5, #7, #20, #28, #34-35)՝ քարոզարշավների ընթացքում տեղի ունեցած ծեծկռտուքներ, ոստիկանության անհամաչափ արձագանք:

Քարոզչական նյութերի վնասում (#2, #8, #10)՝ մրցակիցների պաստառների դիտավորյալ վնասում:

4. Ճնշում իշխանության կողմից

Արձանագրվել են ընտրողների և ընդդիմադիր ուժերի նկատմամբ ճնշման դեպքեր.

Հարկադրանք քվեարկելու կամ չքվեարկելու համար (#3-4, #10, #13-14, #16, #19, #21, #25):

- Պետական աշխատողներին հանձնարարություններ քարոզարշավներին մասնակցելու վերաբերյալ
- «Եթե Փաշինյանի օգտին չքվեարկեք, ձեզ կուղարկեն Ռուսաստան» (#15)

Իշխանական լիազորությունների չարաշահում (#1-2, #5-9, #11-12, #15, #17-18, #20, #22-24, #26-27):

- Խուզարկություններ ընդդիմադիր շտաբներում (#5, #7, #9)
- Աշխատանքից ազատում քաղաքական դրդապատճառներով (#2, #19-20)
- Բնակարանով ապահովված անձանց նկատմամբ ճնշում (#15)

Ընտրողների անձնական տվյալների հավաքագրում (#11-12)՝ ընտրությունների վերահսկման նպատակով:

5. Ընտրակաշառք

Ընտրակաշառքի բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, որոնք առնչվում են տարբեր քաղաքական ուժերի.

Դրամական պարգևատրումներ և խոստումներ (#1-26):

- Պարգևավճարներ ՆԳՆ աշխատակիցներին ընտրությունների նախաշեմին (#3)
- «Զատիկ» կենտրոնի աշխատակիցներին 55,000 դրամ խրախուսում (1.6-2)
- 10,000 դրամով թոշակների բարձրացումը որպես «նախընտրական բոնուս» (#4)

Բարեգործական փաթեթներ և նվերներ (1.6-1, 1.6-3, 1.6-11, 1.6-15):

- Քաղցրավենիքի բաժանում անչափահասներին կուսակցական խորհրդանիշներով
- Անվճար երթուղային տաքսիների խոստում (#6)
- Շինանյութերի տրամադրում (#7)

Քրեական հետապնդումներ (#7, #9, #11, #15-17, #21-22, #24-25)՝ հիմնականում ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների նկատմամբ:

6. Անհավասար հնարավորություններ

Արձանագրվել են ընտրական մրցակցության հավասարության սկզբունքի խախտումներ.

Ընդդիմադիր ուժերի նկատմամբ անհավասար վերաբերմունք (#1-2, #5-6, #8):

- Խուզարկություններ ընդդիմադիր շտաբերում
- Հեռուստաբանավեճերի ժամանակ անհավասար պայմաններ (#2)
- «Ազգային-ժողովրդավարական բևեռի» քարոզչական մեքենայի առգրավում (1.9-4, 1.9-6, 1.9-7)

Արտաքին ազդեցության փորձեր (#3)՝ Ռուսաստանի կողմից ընտրական գործընթացին միջամտելու մասին տեղեկություններ:

7. Դիտորդների և լրագրողների իրավունքների խախտում

Դիտորդական գործունեությանը խոչընդոտում (1.11-1, 1.11-2):

- Դիտորդների վերապատրաստման դասընթացի անցկացման արգելում
- Ընտրատեղամաս մուտքի արգելում
- Լուսանկարահանման և տեսանկարահանման արգելում

8. Ոստիկանության անհամաչափ արձագանք

Արձանագրվել են իրավապահ մարմինների կողմից ընտրադրված վերաբերմունքի դեպքեր.

Ընտրողների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառում (1.9-5, 1.9-8)
Ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների ձերբակալություններ (1.9-2, 1.9-9)
Իշխող ուժի քարոզարշավների ընթացքում ոստիկանության մեծ ներկայություն (1.9-10)
Ընդդիմադիր ուժերի հաղորդումների չընդունում (1.9-3)

9. Ընտրական հանձնաժողովների աշխատանքի խախտումներ

ՏԸՀ անդամների կողմից քաղաքական գործունեություն (1.15-1)՝ ՏԸՀ անդամի կողմից ֆեյսբուքյան էջում քարոզչություն իրականացնելը:

Քվեաթերթիկների բացակայություն (1.12-1, 1.12-2)՝ ընտրատեղամասերում որոշ քաղաքական ուժերի քվեաթերթիկների բացակայություն:

5.10. Ընդհանուր իրավական եզրակացություն

Դիտորդական առաքելության կողմից ուսումնասիրված նյութերը վկայում են, որ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրվել են ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին առնչվող բազմաթիվ խնդիրներ և մտահոգություններ:

Արձանագրված հանգամանքները հիմնականում վերաբերել են.

• հավասար ընտրական պայմանների ապահովմանը,

• պետական չեզոքության պահպանմանը,

• ընտրողների ազատ կամարտահայտմանը,

• քաղաքական մրցակցության արդարությանը,

• հանրային վստահության ապահովմանը:

Համակարգային բնույթի խախտումներ

1. **Վարչական ռեսուրսի լայնածավալ օգտագործում**. Արձանագրված դեպքերը վկայում են պետական և համայնքային համակարգի կազմակերպված օգտագործման մասին իշխող քաղաքական ուժի օգտին: Մարզպետների, համայնքապետերի, նախարարների և այլ պաշտոնատար անձանց ներգրավումը քարոզարշավներում, հատկապես երբ զուգորդվում է աշխատանքային ժամի օգտագործմամբ և ենթակաների նկատմամբ ճնշմամբ, լուրջ հարված է հասցնում ընտրական գործընթացի ազատությանը:
2. **Ուսումնական հաստատությունների քաղաքականացում**. Բազմաթիվ դեպքերում արձանագրվել է դպրոցականների և ուսուցիչների կազմակերպված մասնակցությունը քարոզարշավներին, երբեմն՝ դասապրոցեսի խաթարմամբ: Սա ոչ միայն ընտրական օրենսգրքի, այլև «Հանրակրթության մասին» օրենքի խախտում է:
3. **Ատելության խոսքի և սպառնալիքների տարածում**. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հնչեցված ագրեսիվ հայտարարությունները, բռնության կոչերը և սպառնալիքները ստեղծում են վախի մթնոլորտ և անհանդուրժողականություն քաղաքական հակառակորդների նկատմամբ:
4. **Ընտրակաշառքի քրեական հետապնդումների ընտրողականություն**. Թեև ընտրակաշառքի դեպքերով քրեական վարույթներ են հարուցվել, դրանք առավելապես վերաբերում են ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներին, ինչը հիմք է տալիս ենթադրելու ընտրողական մոտեցման մասին:
5. **Անչափահասների ներգրավում ընտրական գործընթացներում**. Երեխաների օգտագործումը որպես քարոզչական գործիք՝ կուսակցական խորհրդանիշներով շապիկներ կրելուց մինչև քաղցրավենիքի բաժանում, լրջորեն հակասում է ընտրական էթիկային:
6. **Իրավապահ մարմինների անհամաչափ արձագանք**. Արձանագրվել են դեպքեր, երբ իշխող ուժի կողմնակիցների կողմից բռնություն գործադրելիս իրավապահները չեն միջամտել, մինչդեռ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների նկատմամբ կիրառվել են ձերբակալություններ:

Առաքելությունը գտնում է, որ ընտրական գործընթացի վերջնական իրավական գնահատումը պետք է կատարվի նախընտրական ժամանակահատվածի, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների ամբողջական ուսումնասիրության հիման վրա:

Արձանագրված ընտրախախտումների մեծ քանակը, դրանց համակարգային բնույթը և կատեգորիաների լայն շրջանակը վկայում են ընտրական գործընթացում լուրջ խնդիրների մասին: Առավել մտահոգիչ է վարչական ռեսուրսի լայնածավալ օգտագործումը, պաշտոնատար անձանց կողմից ատելության խոսքի տարածումը և իրավապահ մարմինների կողմից ընտրողական մոտեցումը: Այս հանգամանքները կասկածի տակ են դնում ընտրությունների ազատության, արդարության և մրցակցային հավասարության սկզբունքների լիարժեք ապահովումը:

Դիտորդական առաքելության կողմից նախընտրական ժամանակահատվածում, քվեարկության օրը և հետընտրական գործընթացներում արձանագրված փաստերի և ստացված հաղորդումների համապարփակ ուսումնասիրությունը վկայում է, որ 2026 թվականի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրական գործընթացը ուղեկցվել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին առնչվող բազմաթիվ և բազմաշերտ խախտումներով:

Արձանագրված խնդիրները վերաբերել են պետական իշխանության քաղաքական չեզոքության ապահովմանը, վարչական ռեսուրսի լայնածավալ կիրառմանը, ընտրողների ազատ կամարտահայտման վրա ազդեցության փորձերին, ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներին, քաղաքական մրցակցության անհավասար պայմաններին, ատելության խոսքի և սպառնալիքների տարածմանը, իրավապահ մարմինների գործողությունների նկատմամբ ընտրողականության վերաբերյալ լուրջ մտահոգություններին, ընտրական վարչարարության թերություններին, ինչպես նաև ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի ապահովման հետ կապված խնդիրներին:

Առաքելության գնահատմամբ՝ նշված խախտումների զգալի մասը կրել է ոչ թե մեկուսացված, այլ համակարգային և կրկնվող բնույթ: Դրանց տարածվածությունը, բազմազանությունը և ընտրական գործընթացի տարբեր փուլերում դրսևորումը վկայում են, որ դրանք չեն կարող գնահատվել առանձին վերցված միջադեպերի շրջանակում, այլ ենթակա են ամբողջական իրավական գնահատման՝ հաշվի առնելով դրանց համակցված ազդեցությունը ընտրական գործընթացի օրինականության, ազատության, արդարության և հանրային վստահության վրա:

Հատկանշական է, որ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրվել են այնպիսի հանգամանքներ, որոնք անմիջական ազդեցություն են ունեցել քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման վրա: Մասնավորապես, շուրջ 60,000 քաղաքացիների մասնակցության հնարավոր սահմանափակումը, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից երեք ընտրատեղամասերում ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման հետևանքով շուրջ 3,400 քաղաքացիների ձայների վերջնական արդյունքներից դուրս մնալը էական նշանակություն ունեն ընտրությունների ամբողջական իրավական գնահատման տեսանկյունից:

Ընտրական գործընթացի օրինականության գնահատման ժամանակ որոշիչ նշանակություն ունի ոչ միայն յուրաքանչյուր առանձին խախտման թվային արտահայտությունը, այլ նաև դրանց բնույթը, տարածվածությունը, համակարգային դրսևորումները և քաղաքական մրցակցության վրա ունեցած ազդեցությունը:

Ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշների համաձայն՝ ընտրությունների լեգիտիմությունը կախված է ոչ միայն քվեարկության տեխնիկական կազմակերպումից, այլ նաև այն հանգամանքից, թե արդյոք ամբողջ ընտրական գործընթացն ապահովել է հավասար հնարավորություններ քաղաքական ուժերի համար և ընտրողների ազատ ու չհարկադրված կամարտահայտությունը:

Այս համատեքստում դիտորդական առաքելությունը **եզրակացնում է**, որ արձանագրված խախտումների ամբողջությունը կարող էր ունենալ էական ազդեցություն ընտրությունների վերջնական արդյունքների վրա, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում մանդատների բաշխման վրա:

Հաշվի առնելով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության ապահովման և ընտրական արդարության վերականգնման անհրաժեշտությունը՝ դիտորդական առաքելությունը կարևոր է համարում, որպեսզի արձանագրված բոլոր հանգամանքները ենթարկվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված ամբողջական դատական և սահմանադրաիրավական վերահսկողության:

Դիտորդական առաքելությունը հույս է հայտնում, որ ընտրություններին մասնակցած բոլոր քաղաքական ուժերը, ներառյալ ընտրությունների պաշտոնական արդյունքներով խորհրդարանում ներկայացված ուժերը և իշխանությունը ձևավորող քաղաքական ուժը, առաջնորդվելով ժողովրդավարական պետության և իրավունքի գերակայության սկզբունքներով, կօգտագործեն իրենց իրավասության շրջանակներում առկա իրավական մեխանիզմները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը՝ ընտրությունների նկատմամբ հանրային վստահության վերականգնման և ընտրական արդարության լիարժեք ապահովման նպատակով:

6. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

6.1. Ընդհանուր նկարագիր

2026 թվականի հունիսի 7-ին ԵԱԴ «Արդար քվե» դիտորդական առաքելությունը իրականացրել է ընտրությունների քվեարկության օրվա լայնածավալ դիտարկում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Քվեարկության օրը դիտորդական առաքելության աշխատանքներին մասնակցել են ավելի քան 300 կարճաժամկետ դիտորդներ, որոնք տեղաբաշխված են եղել հանրապետության տարբեր մարզերում և Երևան քաղաքում:

Դիտորդների աշխատանքը համակարգվել է կենտրոնացված շտաբի կողմից, որտեղ ամբողջ օրվա ընթացքում հավաքագրվել և մշակվել են դիտորդների հաղորդումները, քաղաքացիների ահազանգերը, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, թեժ գծի 010 588 768 հեռախոսահամարի և youthvote.live հարթակի միջոցով ստացված տեղեկությունները:

Քվեարկության օրը հիմնականում ընթացել է հանգիստ պայմաններում, սակայն առաքելությունը ստացել է ընտրական գործընթացի տարբեր փուլերին վերաբերող զգալի թվով հաղորդումներ և ահազանգեր, որոնք պահանջել են լրացուցիչ ուսումնասիրություն և իրավական գնահատում:

Սույն գլխում ներկայացվում են քվեարկության օրվա ընթացքում արձանագրված հիմնական դիտարկումները:

6.2. Ընտրատեղամասերի բացումը

Դիտորդական առաքելության ներկայացուցիչները հետևել են ընտրատեղամասերի բացման գործընթացին հանրապետության տարբեր համայնքներում:

Ընդհանուր առմամբ տեղամասերի մեծ մասը բացվել է օրենքով սահմանված ժամին:

Միաժամանակ որոշ տեղամասերում արձանագրվել են կազմակերպչական բնույթի խնդիրներ, մասնավորապես՝

• տեխնիկական նախապատրաստական աշխատանքների ուշացում,

• տեղամասերի կահավորման թերություններ,

• հանձնաժողովների առանձին անդամների ուշացում,

• դիտորդների և վստահված անձանց մուտքի կազմակերպման հետ կապված դժվարություններ:

Առաքելության գնահատմամբ՝ արձանագրված խնդիրների մեծ մասը կրել է տեխնիկական բնույթ և հիմնականում հաղթահարվել է քվեարկության մեկնարկից կարճ ժամանակ անց:

6.3. Քվեարկության ընթացքը

Օրվա ընթացքում առաքելությունը ստացել է բազմաթիվ հաղորդումներ քվեարկության ընթացքին վերաբերող միջադեպերի մասին։

Արձանագրված դեպքերը հիմնականում վերաբերել են հետևյալ հարցերին.

• ընտրողների ուղղորդման հնարավոր դեպքեր,

• ընտրողների կուտակումներ տեղամասերի հարակից տարածքներում,

• քվեարկության գաղտնիության պահպանման հետ կապված խնդիրներ,

• ընտրական հանձնաժողովների գործունեության առանձին թերություններ,

• դիտորդների աշխատանքի խոչընդոտման վերաբերյալ ահազանգեր,

• ընտրական գործընթացի մասնակիցների միջև վեճեր և միջադեպեր։

Դիտորդների կողմից ներկայացված հաղորդումների զգալի մասը ստուգվել և փոխանցվել է իրավաբանական խմբին՝ հետագա գնահատման նպատակով։

6.4. Քվեարկության գաղտնիության ապահովումը

Ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներից է քվեարկության գաղտնիության ապահովումը։

Դիտորդական առաքելությունը մի շարք տեղամասերից ստացել է հաղորդումներ, որոնք վերաբերում էին քվեարկության գաղտնիության հնարավոր խախտումներին։

Մասնավորապես արձանագրվել են տեղեկություններ.

• քվեախցիկների ոչ պատշաճ տեղադրման,

• ընտրողների գործողությունների տեսանելիության,

• ընտրողներին ուղեկցող անձանց ներկայության,

• տեղամասերի դասավորության պատճառով գաղտնիության սահմանափակման վերաբերյալ։

Թեև դեպքերի զգալի մասը լուծվել է տեղամասային հանձնաժողովների միջամտությամբ, առաքելությունը կարևոր է համարում, որ նմանատիպ խնդիրները բացառվեն ընտրական գործընթացի բոլոր փուլերում։

6.5. Դիտորդների և զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը

Դիտորդական առաքելությունը դրական է գնահատում այն հանգամանքը, որ տեղամասերի մեծ մասում դիտորդները և լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել իրականացնել իրենց գործունեությունը։

Միաժամանակ առաքելությունը ստացել է առանձին հաղորդումներ դիտորդների աշխատանքի խոչընդոտման, տեղեկությունների տրամադրման մերժման կամ դիտորդական գործունեության սահմանափակման վերաբերյալ։

Նման դեպքերում առաքելության իրավաբանական խումբը կապ է հաստատել համապատասխան ընտրական հանձնաժողովների հետ և փորձել ապահովել դիտորդների իրավունքների լիարժեք իրականացումը։

Առաքելությունը վերահաստատում է, որ դիտորդների անարգել գործունեությունը հանդիսանում է ընտրությունների թափանցիկության կարևորագույն երաշխիքներից մեկը։

6.6. Տեղամասերին հարակից տարածքներում արձանագրված միջադեպերը

Քվեարկության ընթացքում առաքելությունը ստացել է բազմաթիվ հաղորդումներ ընտրատեղամասերի հարակից տարածքներում տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ։

Դրանք հիմնականում վերաբերում էին.

• քաղաքացիների խմբերի կուտակումներին,

• քաղաքական ակտիվության դրսևորումներին,

• ընտրողների հնարավոր ուղղորդմանը,

• վիճաբանություններին,

• առանձին դեպքերում ֆիզիկական բախումների կամ դրանց վտանգի մասին տեղեկություններին:

Առաքելությունը արձանագրում է, որ նման միջադեպերը կարող են բացասաբար անդրադառնալ ընտրողների ազատ կամարտահայտման մթնոլորտի վրա և պահանջում են իրավասու մարմինների օպերատիվ արձագանք:

6.7. Բողոքներ և իրավական արձագանք

Քվեարկության օրվա ընթացքում առաքելության իրավաբանական խումբը ստացել և մշակել է բազմաթիվ դիմումներ, բողոքներ և ահազանգեր:

Դրանք վերաբերել են.

• ընտրական հանձնաժողովների գործողություններին,

• քվեարկության կազմակերպմանը,

• ընտրողների իրավունքների հնարավոր խախտումներին,

• դիտորդների իրավունքների սահմանափակմանը,

• ընտրական օրենսդրության այլ հնարավոր խախտումներին:

Առաքելության ներկայացուցիչները մի շարք դեպքերում ներկայացրել են դիմումներ և բողոքներ համապատասխան ընտրական հանձնաժողովներին:

Ներկայացված դիմում-բողոքների ամբողջական ցանկը ներկայացված է սույն զեկույցի հավելվածներում:

6.8. Ձայների հաշվարկը

Դիտորդները հետևել են նաև տեղամասերում արդյունքների ամփոփման և ձայների հաշվարկի գործընթացին:

Տեղամասերի մեծ մասում հաշվարկն իրականացվել է օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Միաժամանակ առաքելությունը ստացել է տեղեկություններ հաշվարկի ընթացքում արձանագրված առանձին խնդիրների վերաբերյալ։

Դրանք հիմնականում վերաբերել են.

• ընթացակարգային խախտումներին,

• հանձնաժողովների աշխատանքի կազմակերպմանը,

• դիտորդներին տեղեկատվության տրամադրմանը,

• արձանագրությունների լրացման տեխնիկական սխալներին։

Առաքելությունը կարևոր է համարում, որ հաշվարկի ամբողջ գործընթացն իրականացվի առավելագույն թափանցիկությամբ, քանի որ հենց այս փուլում է ձևավորվում ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահությունը։

6.9. Դիտորդական առաքելության կողմից ստացված հաղորդումների վիճակագրությունը

Քվեարկության օրվա ընթացքում առաքելությունը ստացել է զգալի թվով հաղորդումներ՝ ավելի քան 500։

Ստացված հաղորդումները դասակարգվել են հետևյալ հիմնական խմբերով.

• ընտրական հանձնաժողովների գործունեություն,

• քվեարկության գաղտնիության խախտումներ,

• ընտրողների ուղղորդում,

• ընտրողների կուտակումներ,

• քարոզչության արգելքի խախտումներ,

• դիտորդների գործունեության խոչընդոտում,

• հաշվարկի ընթացակարգերի խախտումներ,

• այլ միջադեպեր:

Քվեարկության օրը դիտորդական առաքելության գրանցած դեպքերն ու հաղորդումները ներկայացվում են 2.1 – 2.10 հավելվածներում. դրանք խմբավորված են ըստ հետևյալ կատեգորիաների.

#	Հաղորդումների կատեգորիա	քանակ
1	Խախտումներ քվեարկության գործընթացում	128
2	Միջադեպեր ընտրատեղամասում	38
3	Տեխնիկական և կազմակերպչական խնդիրներ	36
4	Ապօրինի քարոզչություն	34
5	Ընտրական հանձնաժողովի աշխատանքի խախտում	28
6	Տեղամասում գտնվելու կարգի խախտումներ	21
7	Ընտրողների վրա ճնշում և վախեցում	20
8	Փաստաթղթերի հետ կապված խնդիրներ	17
9	Քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման խախտումներ	11
10	Տեղամասում խախտումներ մինչև քվեարկության սկիզբը	5

1. Քվեարկության գաղտնիության խախտումներ

Արձանագրվել են քվեարկության գաղտնիության սկզբունքի բազմաթիվ և համակարգային խախտումներ՝ սա լինելով քվեարկության օրվա ամենատարածված խախտումներից մեկը:

Հիմնական դրսևորումները.

- **Բաց քվեարկություն** (#12, #14, #39-40, #46, #48, #51, #53, #60-61, #71, #88, #91, #96, #100, #109). Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտրողները քվեարկել են քվեախցիկից դուրս՝ բացահայտ ցուցադրելով իրենց ընտրությունը:
- **Քվեաթերթիկի ցուցադրում** (#28, #32, #78, #85). Ընտրողները քվեախցիկից դուրս բերել և ցուցադրել են իրենց քվեաթերթիկները երրորդ անձանց:
- **Լուսանկարահանում քվեախցիկում** (#8, #101, #118). Ընտրողները լուսանկարել կամ տեսանկարահանել են իրենց քվեարկության գործընթացը:
- **Քվեախցիկներում անթույլատրելի անցուդարձ** (#36, #45, #83-84, #89-90, #124). Քվեախցիկների հետևի մասով անցուդարձը կամ պատուհանների չփակված լինելը հնարավորություն է ընձեռել տեսնելու ընտրողի քվեարկությունը:
- **Ազդեցություն ընտրողի վրա** (#10, #43, #65, #81, #116). Ընտրողներին քվեախցիկի մոտ կանգնած անձինք ուղղորդել են, թե ում ընտրել:

Առանձնահատուկ դեպքեր.

- 31/41 ընտրատեղամասում (Գյումրի) արձանագրվել է, որ քաղաքացիները քվեաթերթիկները դուրս են բերել քվեախցիկից, ցուցադրել վերահսկողներին և այնուհետև նետել աղբարկղը (#32, #78):

2. Խցիկում կողմնակի անձանց ներկայություն

Կանոնավոր խախտում է արձանագրվել այն դեպքերում, երբ քվեախցիկում միաժամանակ գտնվել են երկու կամ ավելի անձինք.

Արձանագրված դեպքեր. (#2, #13, #34, #38, #49, #58, #70, #73, #95, #97-98, #105, #107, #110, #112-113, #119, #122, #127)

- Ամուսինների կամ ընտանիքի անդամների միասին քվեարկություն (#38, #73, #107, #116)
- Վստահված անձանց կողմից ընտրողներին քվեախցիկում ուղղորդելու դեպքեր (#13, #110, #119)
- Օգնող անձանց գրանցման կարգի խախտումներ (#37, #47, #72-73, #98, #117)

3. Քվեարկության սահմանված կարգի խախտումներ

Արձանագրվել են քվեարկության ընթացակարգային էական խախտումներ.

- **Առանց ծրարի կամ կտրոնի քվեարկություն** (#4, #7, #24, #31, #68, #74, #77, #92). Ընտրողները քվեատուփ են գցել ծրարներ առանց դրոշմանիշի, կամ ընդհանրապես առանց ծրարի:
- **Կրկնակի քվեարկության փորձեր** (#6, #18, #64). Արձանագրվել են դեպքեր, երբ նույն անձը փորձել է քվեարկել երկու անգամ (այդ թվում՝ զինվորական համազգեստով անձ Վանաձորում՝ #18):
- **Ընտրողի կողմից քվեաթերթիկների վնասում** (#15). Ընտրողը պատռել է ծրարը և քվեաթերթիկները դրոշմանիշի բացակայության պատճառով:
- **Քվեարկություն առանց անձը հաստատող փաստաթղթի** (#80, #86). Արձանագրվել են դեպքեր, երբ ընտրողներին թույլատրվել է քվեարկել ժամկետանց անձնագրով կամ առանց համապատասխան փաստաթղթի:

4. Ապօրինի քարոզչություն քվեարկության օրը

Քվեարկության օրը, երբ գործում է քարոզչության արգելքը, արձանագրվել են խախտումների զգալի քանակ.

Ընտրատեղամասում կամ հարակից տարածքում քարոզչություն (#2-5, #7-9, #14-16, #18, #21-24, #28-31, #33-34):

- Քարոզչական պաստառների առկայություն տեղամասին 50 մետրից պակաս հեռավորության վրա (#2, #5, #8-9, #23, #28)
- Վստահված անձանց և քաղաքացիների կողմից կուսակցական խորհրդանիշներ կրելը (#12, #15, #19, #21-22, #24-27, #33-34)
- Քարոզչական բնույթի ժեստերի կատարում բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից (#29)

Առանձնահատուկ ուշադրության արժանի դեպքեր.

- Վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից 8/20 ընտրատեղամասում քվեարկությունից հետո «սրտիկ» ժեստի ցուցադրումը (#29)՝ դիտարկվել է որպես քարոզչական գործողություն:
- Ընտրատեղամասի մոտ ՔՊ շտաբի անդամների կողմից քաղաքացիների ուղղորդում (#14):
- Ծնողների կողմից երեխաներին Փաշինյանի պատկերով շապիկներ հագցնելը (#15):

5. Ընտրական հանձնաժողովների աշխատանքի խախտումներ

Արձանագրվել են հանձնաժողովների աշխատանքում բազմաթիվ թերացումներ և օրենքի խախտումներ:

Խախտումների արձանագրումից հրաժարվելը (#1, #33, #90, #2.5-1, #2.5-13, #2.5-15, #2.5-18, #2.5-24):

- Հանձնաժողովի նախագահների կողմից դիտորդների կողմից արձանագրված խախտումները մատյանում գրանցելուց հրաժարվելը
- ՔՊ վստահված անձի հրաժարումը արձանագրել խախտումները (#2.3-19)

Գրանցման կարգի խախտումներ (#2.5-3, #2.5-4, #2.5-10, #2.5-12, #2.5-20-23, #2.5-25-26):

- Ընտրողների սխալ ստորագրում և կնքում (#3, #11-12, #2.5-10)

- Քվեաթերթիկների անհավասար բաշխում (#2.5-6, #2.5-21, #2.5-23). Մասնավորապես, 9/53 տեղամասում «Ուժեղ Հայաստանի» քվեաթերթիկները արագ սպառելու նպատակով ընտրողներին երկուական 3-րդ համարի քվեաթերթիկ են տվել:
- Ընտրացուցակներում այլ անձանց գրանցված լինելու դեպքեր (#2.5-3, #2.5-20)

Դիտորդների և վստահված անձանց իրավունքների սահմանափակում (#2.5-27-28):

- Դիտորդներին նիստի մասնակցելու և փաստաթղթերին ծանոթանալու հնարավորության չտրամադրում
- Տարբեր տեղամասերում գրանցված դիտորդի՝ ընտրելու իրավունքի իրացմանը խոչընդոտում (#27)

6. Տեխնիկական և կազմակերպչական խնդիրներ

Արձանագրվել են լուրջ տեխնիկական և կազմակերպչական թերացումներ.

Տեսահսկման համակարգի խնդիրներ (#2.3-2, #2.3-4, #2.3-6, #2.3-26, #2.3-30):

- Քվեաթերթիկների պահպանման պահարանների (սեյֆերի) գտնվելը տեսախցիկների տեսադաշտից դուրս
- Քվեատուփի տեղադրումը տեսախցիկի տեսադաշտից դուրս (#2.3-5)
- Տեսախցիկների ոչ ճիշտ տեղադրում կամ անաշխատունակություն (#2.3-26, #2.3-30)

Հոսանքի անջատում (#2.3-7). Արձանագրվել է, որ քվեարկության ավարտից րոպեներ առաջ հոսանքազրկվել են առնվազն 7 ընտրատեղամասեր (17/37, 18/6, 18/14, 18/32, 18/54, 18/79, 11/8):

Հանձնաժողովի անդամների անպատրաստվածություն (#2.3-16, #2.3-19, #2.3-22, #2.3-28-29, #2.3-31-35):

- Հերթերի կուտակում, ժամանակին հերթափոխի չկատարում (#2.3-29, #2.3-33)
- Ընտրատեղամասի ոչ պատշաճ չափսեր (#2.3-32)
- Առանց բեյջի վստահված անձանց ներկայություն (#2.3-34)

7. Ընտրողների նկատմամբ ճնշում և վախեցում

Արձանագրվել են ընտրողների ազատ կամարտահայտության սահմանափակման լուրջ դեպքեր.

Վստահված անձանց կողմից ուղղորդում և վերահսկում (#2.7-3, #2.7-5, #2.7-7-9, #2.7-11-12, #2.7-18-20):

- Համայնքի ղեկավարների կողմից ընտրողների ուղղորդում (#4, #8-9, #12)
- Վստահված անձանց կողմից ընտրողներին դիմավորելը և ճանապարհելը (#5, #7)
- ՔՊ վստահված անձի կողմից ընտրողի ուղղորդումը 3-րդ համարի քվեաթերթիկը «տրցակի տակ դնելու» վերաբերյալ (#2.7-20)

Հոգեբանական ճնշում (#2.7-2, #2.7-5, #2.7-10, #2.7-13-14):

- Ֆիզիկական բռնության դեպքեր (#2.7-2). Լիճք գյուղում քաղաքացու ծեծը ՔՊ-ականների կողմից
- Ընտրողների կոլեկտիվ բերում ընտրատեղամաս (#2.7-10)

Իշխանության ներկայացուցիչների կողմից ճնշում (#2.7-1, #2.7-4, #2.7-9, #2.7-12):

- Ընդդիմադիր շտաբի պետի ձերբակալություն Գյումրիում (#2.7-1)
- Համայնքի ղեկավարի կողմից ընտրողների ուսումնասիրություն (#4)

8. Փաստաթղթերի հետ կապված խնդիրներ

Ընտրողների ցուցակներում ոչ ճշգրիտ տեղեկատվություն (#2.8-1, #2.8-2, #2.8-10, #2.8-16-17):

- Բնակության հասցեներում այլ անձանց գրանցված լինելու դեպքեր
- Մահացած կամ երկրում չգտնվող անձանց առկայություն ցուցակներում

Քվեաթերթիկների անհավասար քանակ (#2.8-6). 14/12 ընտրատեղամասում 15, 16 և 19 համարների քվեաթերթիկները զգալիորեն ավելի շատ են, քան 3 և 7 համարները:

Կտրոնների կորուստ (#2.8-7-8, #2.8-11, #2.8-13). Բազմաթիվ դեպքերում ընտրողները կորցրել են կտրոնները, ինչի հետևանքով զրկվել են քվեարկելու հնարավորությունից կամ գործընթացը ձգձգվել է:

9. Միջադեպեր ընտրատեղամասերում

Արձանագրվել են ընտրատեղամասերում հասարակական կարգի խախտումներ և լարված իրավիճակներ:

- **Վստահված անձանց անպարկեշտ վարքագիծ** (#2.2-4, #2.2-38). ՔՊ վստահված անձի կողմից «թզբեհով» շրջելը, «ասեք Վլենն է ասել» խոսույթը:
- **Ընտրողների և հանձնաժողովի միջև վեճեր** (#2.2-11, #2.2-18, #2.2-32-33):
- **Քարոզչական ատրիբուտիկայով ընտրատեղամաս այցելություն** (#2.2-9, #2.2-36). ՔՊ շապիկով կամ մայկան հագած ընտրողներ:
- **Ուղղորդում և միջամտություն** (#2.2-12, #2.2-19, #2.2-30). Աուտիզմով տառապող երեխային ընտրական գործընթացում ներգրավելու փորձ (#30):

10. Տեղամասի մատչելիության խնդիրներ

Արձանագրվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրատեղամասերի անմատչելիության դեպքեր (#11, #30, #44, #66, #111):

- Թեքահարթակների բացակայություն կամ դրանցից օգտվելու անհնարինություն (#11, #44)
- Ընտրատեղամասերի գտնվելը շենքերի երկրորդ հարկերում առանց վերելակների (#66)
- Ձեռնափայտով տարեց անձանց համար բարձր աստիճանների առկայություն (#30)

11. Քվեների հաշվարկի և արդյունքների ամփոփման խախտումներ

- Ստորագրությունների քանակի և փաստացի քվեարկածների միջև անհամապատասխանություն (#2.9-1, #2.9-10)
- Անվավեր քվեաթերթիկների վերաբերյալ վիճելի որոշումներ (#2.9-8)
- Քվեաթերթիկների վնասում հաշվարկի ընթացքում (#2.9-3-7, #2.9-9)
- Կտրոնների և ցուցակների միջև թվերի անհամապատասխանություն (#2.9-11)

12. Նախապատրաստական ժամանակաընթացքում խախտումներ

- Քվեատուփի ոչ պատշաճ կնքում (#2.10-2, #2.10-5)

- Ընտրատեղամասի ուշացումով բացում (#2.10-4). 8/38 տեղամասը բացվել է 07:18-ին՝ 18 րոպե ուշացումով
- Թանաքոտված քվեաթերթիկների տրամադրում (#2.10-3)

Համակարգային բնույթի խնդիրներ

1. **Քվեարկության գաղտնիության սկզբունքի զանգվածային խախտում**: Սա լինելով քվեարկության օրվա ամենատարածված խախտումը, վկայում է ընտրողների շրջանում գաղտնի քվեարկության մշակույթի բացակայության և հանձնաժողովների կողմից այդ սկզբունքի պատշաճ պահպանման նկատմամբ վերահսկողության թուլության մասին:
2. **Վստահված անձանց կողմից ընտրողների ուղղորդումը**: ՔՊ վստահված անձանց (այդ թվում՝ համայնքների ղեկավարների, պետական ծառայողների) կողմից ընտրողներին բացահայտ ուղղորդելու դեպքերը վկայում են վարչական ռեսուրսի շարունակական կիրառման մասին նաև քվեարկության օրը:
3. **Ընտրական հանձնաժողովների անկախության և արձագանքման կարողության խնդիրներ**: Հանձնաժողովի նախագահների կողմից ակնհայտ խախտումները գրանցելուց հրաժարվելը, դիտորդների իրավունքների սահմանափակումը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների անպատրաստվածությունը լրջորեն վնասել են ընտրական գործընթացի թափանցիկությանը:
4. **Քարոզչության արգելքի խախտում քվեարկության օրը**: Ընտրատեղամասերում և հարակից տարածքներում կուսակցական խորհրդանիշներ կրելու, պաստառների առկայության բազմաթիվ դեպքերը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից քարոզչական ժեստի կատարումը ակնհայտ անտեսում են «լռության օրվա» պահանջները:
5. **Տեխնիկական անբավարարություններ**: Տեսահսկման համակարգի թերությունները (չհրկիզվող պահարանները և քվեատուփը տեսադաշտից դուրս), հոսանքի անջատումները, քվեաթերթիկների անհավասար բաշխումը լրջորեն խաթարել են գործընթացի նկատմամբ վերահսկողությունը և ստեղծել ընտրակեղծիքի ռիսկեր:
6. **Ընտրատեղամասերի անմատչելիություն**: Հաշմանդամություն ունեցող և տարեց անձանց համար մատչելիության պահանջների անտեսումը խտրականություն է և խախտում է ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը:
7. **Ընտրացուցակների անճշտություններ**: Այլ անձանց բնակության հասցեներում գրանցված լինելու, մահացած անձանց առկայության դեպքերը վկայում են ընտրացուցակների կազմման լուրջ թերությունների մասին:

6.10. Քվեարկության օրվա ընդհանուր գնահատական

Դիտորդական առաքելության գնահատմամբ՝ քվեարկության օրը ընտրական գործընթացը ընդհանուր առմամբ իրականացվել է կազմակերպված պայմաններում, սակայն դրա ընթացքում արձանագրվել են բազմաթիվ և բազմաբնույթ խախտումներ, որոնց մի մասը կրել է համակարգային բնույթ և լրջորեն ազդել է ընտրական գործընթացի ազատության, գաղտնիության և թափանցիկության նկատմամբ հանրային վստահության վրա։

Առավել մտահոգիչ են եղել քվեարկության գաղտնիության սկզբունքի զանգվածային խախտումները, ընտրողների ուղղորդման և նրանց կամարտահայտության վրա ազդեցության դեպքերը, հատկապես վստահված անձանց և քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների առանձին անդամների և նախագահների կողմից արձանագրված խախտումների կանխարգելման կամ պատշաճ արձագանքման պարտականության ոչ լիարժեք իրականացումը։

Քվեարկության օրվա ընթացքում արձանագրվել են նաև ընտրատեղամասերի հարակից տարածքներում ընտրողների կուտակումներ, ընտրողների նկատմամբ վերահսկողության կամ ազդեցության հնարավոր ռիսկեր, քարոզչության արգելքի պահանջների խախտումներ, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների գործունեության խոչընդոտման դեպքեր, ընտրական վարչարարության թերություններ, ինչպես նաև քվեարկության և ձայների հաշվարկի ընթացքում արձանագրված մի շարք ընթացակարգային խախտումներ։

Առաքելության գնահատմամբ՝ քվեարկության օրվա խախտումները չեն կարող դիտարկվել մեկուսացված դեպքերի մակարդակում։ Դրանց մեծ քանակը, տարածվածությունը և կրկնվող բնույթը վկայում են ընտրական գործընթացի տարբեր փուլերում առկա համակարգային խնդիրների մասին, մասնավորապես՝ ընտրողների ազատ կամարտահայտության պաշտպանության, ընտրական հանձնաժողովների անկախ և արդյունավետ գործունեության, ինչպես նաև քվեարկության գաղտնիության ապահովման ոլորտներում։

Հատկանշական է, որ ընտրությունների ազատ և արդար բնույթի գնահատումը չի կարող սահմանափակվել միայն քվեարկության օրվա տեխնիկական կազմակերպմամբ։ Այն պետք է իրականացվի նախընտրական միջավայրի, քվեարկության ընթացքում արձանագրված խախտումների, ձայների հաշվարկի, արդյունքների ամփոփման և հետընտրական իրավական գործընթացների ամբողջական համատեքստում։

Այսպիսով, քվեարկության օրը արձանագրված խախտումների բնույթն ու ծավալը, դիտարկվելով նախընտրական և հետընտրական փուլերում արձանագրված խնդիրների հետ համակցված, հիմք են տալիս եզրակացնելու, որ դրանք կարող էին ազդել ընտրական գործընթացի ազատության, արդարության և ընտրողների իրական կամարտահայտության լիարժեք արտացոլման վրա:

Քվեարկության ընթացքում ստացված բոլոր հաղորդումները, դրանց դասակարգումը, ինչպես նաև դիտորդական առաքելության կողմից ներկայացված դիմում-բողոքների ամբողջական ցանկը ներկայացված են սույն զեկույցի հավելվածներում:

7. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

7.1. Ներածություն

Քվեարկության օրվան հաջորդած ժամանակահատվածը հանդիսանում է ընտրական գործընթացի կարևորագույն փուլերից մեկը, քանի որ հենց այս ընթացքում են ամփոփվում ընտրությունների արդյունքները, քննության առարկա դառնում ընտրական գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները, իրականացվում վերահաշվարկներ և կայացվում ընտրությունների օրինականության վերաբերյալ որոշումներ:

Դիտորդական առաքելությունը շարունակել է իր գործունեությունը նաև քվեարկության օրվանից հետո՝ հետևելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքին, վերահաշվարկների ընթացքին, բողոքարկման գործընթացներին և իրավասու մարմինների արձագանքներին:

7.2. Ընտրությունների նախնական արդյունքների հրապարակումը

Քվեարկության ավարտից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սկսել է տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացվող տվյալների հիման վրա ընտրությունների նախնական արդյունքների հրապարակումը:

Առաքելությունը արձանագրում է, որ ընտրությունների արդյունքների հրապարակման գործընթացն իրականացվել է օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Միաժամանակ քաղաքական ուժերը, դիտորդական կազմակերպությունները և հանրային տարբեր դերակատարներ հանդես են եկել ինչպես ընտրությունների

արդյունքների ընդունման, այնպես էլ դրանց վերաբերյալ մտահոգությունների վերաբերյալ հայտարարություններով:

Հետընտրական փուլը բնութագրվել է բարձր քաղաքական ակտիվությամբ և ընտրությունների արդյունքների շուրջ ծավալված ինտենսիվ հանրային քննարկումներով:

7.3. Վերահաշվարկների գործընթացը

Ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո մի շարք ընտրատեղամասերում ներկայացվել են վերահաշվարկ իրականացնելու պահանջներ:

Վերահաշվարկների ընթացքում ուսումնասիրվել են քվեաթերթիկները, տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները և ընտրական գործընթացին առնչվող այլ փաստաթղթեր:

Առաքելության ներկայացուցիչները հետևել են վերահաշվարկների մի մասին և արձանագրել են, որ վերահաշվարկների արդյունքում որոշ տեղամասերում արձանագրվել են տվյալների ճշգրտումներ, մինչդեռ մի շարք դեպքերում նախնական արդյունքները մնացել են անփոփոխ:

Վերահաշվարկների գործընթացը կարևոր նշանակություն ունի ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ամրապնդման տեսանկյունից, քանի որ այն հնարավորություն է տալիս վերացնել հնարավոր տեխնիկական կամ ընթացակարգային սխալները:

Մասնավորապես, ԿԸՀ-ն ամփոփել է ընտրատեղամասերի ավելի քան 30%-ի (637 տեղամաս) վերահաշվարկի արդյունքները, համաձայն որի՝

- «Ռեֆորմիստներ» -1456 քվեն նվազել է 11-ով,
- «Բոլորին դեմ եմ» - 21477 քվեն նվազել է 244-ով,
- «Ուժեղ Հայաստան» դաշինք - 340088 քվեն ավելացել է 508-ով,
- Շնորհապետական - 30807 քվեն նվազել է 117-ով,
- «Նոր ուժ» - 25624 քվեն նվազել է 21-ով,
- «Միասնության թևեր» - 33644 նվազել է 56-ով,
- ԲՀԿ - 58378 քվեն ավելացել է 147-ով,
- ԱԺԲ - 5485 քվեն ավելացել է 5-ով,

- «Քոչարի» - 1984 ավելացել է 1-ով,
- ՀԱԿ - 3206 նվազել է 47-ով,
- «Հանրապետություն» - 15835 քվեն ավելացել է 8-ով,
- ՔԺԿ - 2679 քվեն մնացել է անփոփոխ,
- «Ժողովրդավարական համախմբում» - 5284 քվեն նվազել է 14-ով,
- ԴՕԿ - 26567 քվեն նվազել է 819-ով,
- ՔՊ - 727820 քվեն ավելացել է 1148-ով,
- «Հայաստան» դաշինք - 145113 քվեն ավելացել է 217-ով,
- Հանուն Հանրապետության - 6750 քվեն ավելացել է 18-ով,
- ԼՀԿ - 7258 քվեն ավելացել է 55-ով:

📌 Անճշտությունների գումարային չափը 1279-ից ավելացել է 230-ով:

📃 Անվավեր քվեաթերթիկների թիվը 17097-ից նվազել է 859-ով:

Այս թվերը ցույց են տալիս, որ ընտրատեղամասերում ձայների հաշվարկը չի կատարվել պատշաճ մակարդակով, հանձնաժողովները թույլ են տվել բազմաթիվ բացթողումներ: Այս սխալներն ու խախտումները կարող էին ազդեցություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա, առավել ևս, որ կուսակցություններից մեկը անցողիկ շեմը հաղթահարելու համար խնդիր ուներ:

7.4. Դիմում-բողոքների քննությունը

Հետընտրական ժամանակահատվածում ընտրական հանձնաժողովներ, իրավապահ մարմիններ և դատարաններ են ներկայացվել բազմաթիվ դիմումներ և բողոքներ:

Ներկայացված դիմումները հիմնականում վերաբերել են.

• քվեարկության կազմակերպմանը,

• ընտրական հանձնաժողովների գործողություններին,

• ձայների հաշվարկի գործընթացին,

• արձանագրությունների կազմմանը,

• ընտրողների իրավունքների հնարավոր խախտումներին,

• նախընտրական և քվեարկության օրվա ընթացքում արձանագրված այլ միջադեպերին:

Առաքելությունը հետևել է ներկայացված դիմումների քննության ընթացքին և արձանագրում է, որ ընտրական վեճերի արդյունավետ և ժամանակին լուծումը հանդիսանում է ընտրական արդարադատության կարևորագույն բաղադրիչներից մեկը։

7.5. Ընտրական հանձնաժողովների որոշումները

Հետընտրական ժամանակահատվածում ընտրական հանձնաժողովները քննարկել են ընտրական գործընթացին վերաբերող բազմաթիվ հարցեր և կայացրել համապատասխան որոշումներ։

Դրանք վերաբերել են.

- վերահաշվարկների արդյունքներին,
- ներկայացված բողոքներին,
- արձանագրությունների ճշգրտումներին,
- ընտրությունների արդյունքների ամփոփմանը,
- ընտրական գործընթացի այլ հարցերին։

Առաքելությունը կարևոր է համարում, որ բոլոր որոշումները լինեն հիմնավորված, հրապարակային և հասանելի հանրությանը, քանի որ դրանց թափանցիկությունը անմիջականորեն ազդում է ընտրությունների նկատմամբ վստահության վրա։

7.6. Ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչման դեպքերը

Հետընտրական փուլում իրավասու մարմինների կողմից ուսումնասիրվել են նաև ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված այն դեպքերը, որոնք կարող էին հիմք հանդիսանալ առանձին ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման համար։

Ընտրական օրենսդրությունը նախատեսում է, որ ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել այն դեպքերում, երբ արձանագրված խախտումները կարող էին էական ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա։

Առաքելությունը հետևել է նման դեպքերի վերաբերյալ կայացված որոշումներին և արձանագրում է, որ դրանց իրավական հիմնավորվածությունը կարևոր նշանակություն ունի ընտրական գործընթացի ամբողջական օրինականության գնահատման համար։

Առաջիկայում մեր դիտորդական առաքելությունը կանդրադառնա անվավեր ճանաչված ընտրատեղամասերին, կայացված որոշումներին և դրանց հիմնավորումների վերաբերյալ տվյալներին՝ առանձին զեկույցով։

ԵԱԴ «Արդար քվե» դիտորդական առաքելությունը համարում է, որ ԿԸՀ-ի կողմից թիվ 10/51, 12/13 և 35/65 ընտրատեղամասերում վերաքվեարկություն չնշանակելու որոշումը բացահայտ անհամաչափ և իրավական առումով չհիմնավորված է։ Այն դեպքում, երբ ԿԸՀ-ն արդեն իսկ արձանագրել է ընտրությունների արդյունքների վրա ազդելու ունակ խախտումների առկայություն և որոշ տեղամասերում անվավեր է ճանաչել քվեարկության արդյունքները, վերաքվեարկության չնշանակումը չի ապահովում ընտրողների կամքի լիարժեք վերականգնումը և լրջորեն վնասում է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությանը։

7.7. Իրավապահ մարմինների արձագանքը

Հետընտրական ժամանակահատվածում իրավապահ մարմինները շարունակել են ուսումնասիրել ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված հնարավոր իրավախախտումների վերաբերյալ տեղեկությունները։

Ուսումնասիրվել են ինչպես քվեարկության օրվա, այնպես էլ նախընտրական ժամանակահատվածի ընթացքում ստացված հաղորդումները։

Առաքելությունը կարևոր է համարում, որ ընտրական գործընթացներին առնչվող բոլոր հաղորդումները քննվեն արդյունավետ, ոչ միակողմանի, անաչառ և հավասար չափանիշներով՝ անկախ դրանց քաղաքական ենթատեքստից։

Հանրային վստահության պահպանման համար առանձնահատուկ նշանակություն ունի իրավապահ մարմինների գործունեության թափանցիկությունն ու քաղաքական չեզոքության նկատմամբ հանրային վստահությունը։

7.8. Դատական գործընթացներ

Հետընտրական փուլում ընտրական գործընթացի առանձին հարցեր դարձել են նաև դատական քննության առարկա։

Դատարաններ են ներկայացվել ընտրական վեճեր, բողոքներ և ընտրությունների արդյունքներին առնչվող այլ դիմումներ։

Առաքելությունը վերահաստատում է, որ դատարանների անկախ, անաչառ և արդյունավետ գործունեությունը հանդիսանում է ընտրական իրավունքի պաշտպանության առանցքային երաշխիքներից մեկը։

Դատական վերահսկողության արդյունավետությունը կարևոր դեր ունի ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության ձևավորման գործում։

Դիտորդական առաքելությունը հետագայում կանդրադառնա դատարան (այդ թվում՝ Սահմանադրական դատարան) ներկայացված գործերի և դրանց քննության ընթացքին։

7.9. Հասարակական և քաղաքական արձագանքները

Հետընտրական ժամանակահատվածը ուղեկցվել է ակտիվ քաղաքական և հասարակական քննարկումներով։

Ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, փորձագետները և քաղաքացիները հրապարակայնորեն արտահայտել են իրենց դիրքորոշումները ընտրությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ։

Քաղաքական գնահատականները եղել են բազմազան, ինչը բնորոշ է մրցակցային ընտրական գործընթացներին։

Միաժամանակ առաքելությունը կարևոր է համարում, որ հետընտրական քաղաքական քննարկումները շարունակվեն իրավական և ժողովրդավարական մեխանիզմների շրջանակներում։

7.10. Հետընտրական ժամանակահատվածի ընդհանուր գնահատական

Առաքելության գնահատմամբ՝ հետընտրական փուլը հանդիսացել է ընտրական գործընթացի կարևոր շարունակությունը, որի ընթացքում փորձ է արվել իրավական մեխանիզմների միջոցով արձագանքել ընտրությունների ընթացքում առաջացած վիճահարույց հարցերին:

Վերահաշվարկների իրականացումը, բողոքների քննությունը, ընտրական հանձնաժողովների և դատարանների գործունեությունը կարևոր դեր են ունեցել ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահության պահպանման գործում:

Միաժամանակ առաքելությունը գտնում է, որ ընտրական գործընթացի ամբողջական գնահատումը պետք է հիմնված լինի նախընտրական շրջանի, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացների համակցված վերլուծության վրա:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից երեք ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումը: Դիտորդական առաքելությունը արձանագրում է, որ նշված որոշումն ինքնին վկայում է այդ տեղամասերում տեղի ունեցած խախտումների այնպիսի բնույթի և ծանրության մասին, որոնք անհնար են դարձրել ընտրողների իրական կամարտահայտության հավաստի հաստատումը:

Սակայն միևնույն ժամանակ առաքելությունը խիստ մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ այդ ընտրատեղամասերում վերաքվեարկություն չի նշանակվել: Արդյունքում շուրջ 3,400 քաղաքացիների կողմից արդեն իսկ իրականացված ընտրական իրավունքը չի արտացոլվել ընտրությունների վերջնական արդյունքներում, իսկ այդ քաղաքացիները փաստացի զրկվել են իրենց ներկայացուցչական իշխանության ձևավորման գործընթացին մասնակցելու հնարավորությունից:

Դիտորդական առաքելության գնահատմամբ՝ այն դեպքերում, երբ ընտրական խախտումների հետևանքով անվավեր է ճանաչվում ամբողջ ընտրատեղամասի արդյունքը, պետության առաջնային պարտավորությունը պետք է լինի ընտրողների կամարտահայտության վերականգնումը և ընտրական իրավունքի լիարժեք իրացման ապահովումը: Այդ նպատակին առավել համապատասխանող իրավական միջոցը տվյալ ընտրատեղամասերում վերաքվեարկության նշանակումն է:

Հատկանշական է, որ երեք ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչումը և վերաքվեարկության չնշանակումը ունեցել են ոչ միայն առանձին քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակման հետևանք, այլև ազդել են ընտրությունների

համապետական արդյունքների վրա՝ փոփոխելով Ազգային ժողովում մանդատների բաշխումը։ Այս հանգամանքը տվյալ որոշմանը տալիս է առանձնահատուկ սահմանադրաիրավական նշանակություն և պահանջում է դրա ամբողջական դատական գնահատումը։

Դիտորդական առաքելությունը գտնում է, որ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վերականգնման և ժողովրդավարական ընտրությունների սկզբունքների պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է իրավական գնահատական տալ ոչ միայն այն խախտումներին, որոնք հանգեցրել են ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչմանը, այլ նաև այն որոշմանը, որի հետևանքով հազարավոր քաղաքացիներ զրկվել են իրենց ընտրական իրավունքի արդյունավետ իրացումից։

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Ընդհանուր գնահատական

ԵԱԴ «Արդար քվե» դիտորդական առաքելության կողմից իրականացված երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկումների, հավաքագրված հաղորդումների, փաստերի վերլուծության, ներկայացված դիմում-բողոքների, իրավական գնահատման և հետընտրական զարգացումների ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ 2026 թվականի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել բարձր քաղաքական մրցակցության պայմաններում, սակայն ընտրական ամբողջ գործընթացը ուղեկցվել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին առնչվող բազմաթիվ և համակարգային խնդիրներով։

Առաքելության գնահատմամբ՝ ընտրական գործընթացի վրա էական ազդեցություն ունեցած հիմնական խնդիրներն են եղել՝

- վարչական ռեսուրսի լայնածավալ օգտագործումը և պետական կառավարման համակարգի ու իշխող քաղաքական ուժի գործունեության միջև սահմանների խաթարումը,

- ընտրողների ազատ կամարտահայտության վրա ազդեցության տարբեր ձևերը, ներառյալ ընտրողների ուղղորդումը, վարչական կախվածության գործոնների կիրառումը և ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումները,

• Հանրային հեռուստաընկերության կողմից ընտրական գործընթացի լուսաբանման ընթացքում հավասարակշռության և անաչառության սկզբունքների ապահովման հետ կապված խնդիրները,

• քաղաքական անհանդուրժողականության, ատելության խոսքի, վիրավորանքների և սպառնալիքների բարձր մակարդակը, որոնք խոչընդոտել են առողջ քաղաքական բանավեճի ձևավորմանը,

• ընտրական հանձնաժողովների գործունեության արդյունավետության հետ կապված խնդիրները, այդ թվում՝ որոշ դեպքերում արձանագրված խախտումների կանխարգելման, արձանագրման և պատշաճ արձագանքման անբավարարությունը,

• քվեարկության գաղտնիության բազմաթիվ և որոշ դեպքերում զանգվածային խախտումները, ընտրողների ուղղորդման դեպքերը և քվեարկության օրվա ընթացքում արձանագրված այլ խախտումները,

• ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի ապահովման հետ կապված լուրջ խնդիրները, ներառյալ շուրջ 60,000 քաղաքացիների ընտրություններին մասնակցելու հնարավորության սահմանափակումը (մանրամասն՝ 8.2-ում) և երեք ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման հետևանքով շուրջ 3,400 քաղաքացիների ձայների վերջնական արդյունքներից դուրս մնալը,

• ընտրական վեճերի քննության և արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմների ոչ լիարժեք գործարկումը:

Դիտորդական առաքելությունը արձանագրում է, որ նշված խախտումները և խնդիրները պետք է գնահատվեն ոչ թե մեկուսացված դեպքերի, այլ դրանց ամբողջության և փոխկապակցված ազդեցության տեսանկյունից: Դրանց լայն տարածվածությունը, համակարգային բնույթը և ընտրական գործընթացի տարբեր փուլերում դրսևորումը հիմք են տալիս եզրակացնելու, որ դրանք կարող էին էական ազդեցություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա, այդ թվում՝ Ազգային ժողովում մանդատների բաշխման վրա:

Միևնույն ժամանակ, ընտրությունների նկատմամբ հանրային վստահության վերականգնումը պահանջում է արձանագրված բոլոր խախտումների, ինչպես նաև հետընտրական փուլում կայացված այն որոշումների ամբողջական իրավական գնահատում, որոնց հետևանքով սահմանափակվել է քաղաքացիների ընտրական իրավունքի լիարժեք իրացումը:

8.2. Արցախից բռնի տեղահանված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակման հարցը

Դիտորդական առաքելության գնահատմամբ՝ ընտրությունների արդյունքների և ընտրական գործընթացի օրինականության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցող հանգամանքներից մեկը վերաբերում է Արցախից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց ընտրական իրավունքների իրականացման խնդրին։

Առաքելության կողմից ուսումնասիրված նյութերը, այդ թվում՝ դատական ակտերը, վկայում են, որ 2026 թվականի Ազգային ժողովի ընտրություններից առաջ մի շարք քաղաքացիներ փաստացի զրկվել են ընտրողների ցուցակներում ընդգրկվելու և ընտրություններին մասնակցելու հնարավորությունից։

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Մարատ Սերգեյի Եգանյանը, Իրինա Սերգեյի Եգանյանը և Վիկտորյա Յուրիի Առստամյանը, տեղեկանալով, որ ընդգրկված չեն ընտրողների ցուցակներում, դիմել են իրավասու պետական մարմիններին՝ իրենց ընտրական իրավունքի իրացման նպատակով։

Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը մերժել է նրանց պահանջները՝ հղում կատարելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864-Ն որոշմանը և նշելով, որ նրանք հանդիսանում են ժամանակավոր պաշտպանության տակ գտնվող անձինք։

Դիմողները վիճարկել են նշված որոշումները դատական կարգով՝ ներկայացնելով ապացույցներ այն մասին, որ դեռևս մինչև 2023 թվականը հանդիսացել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ։

ՀՀ ընդհանուր իրավասության դատարանները 2026 թվականի մայիսի 14-ի, մայիսի 19-ի և մայիսի 25-ի համապատասխան վճիռներով արձանագրել են, որ արդեն իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձի քաղաքացիությունը չի կարող դադարեցված համարվել միայն ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ստանալու փաստի ուժով։ Դատարանները բավարարել են հայցվորների պահանջները և վերականգնել նրանց ընտրական իրավունքները՝ միաժամանակ նշելով, որ տվյալ վճիռները վերջնական են և վերանայման ենթակա չեն։

Սակայն հետագայում նշված վճիռները բողոքարկվել են, և վերաքննիչ դատարանը, չհերքելով այն հանգամանքը, որ հայցվորների նպատակը ընտրողների ցուցակներում ընդգրկվելն էր, բեկանել է առաջին ատյանի դատարանների որոշումները՝ վկայակոչելով վեճի ենթակայության հետ կապված հարցեր։

Առաքելությունը հատուկ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ նախկին ընտրական գործընթացների ընթացքում ընտրողների ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ հարյուրավոր գործեր քննվել են ընդհանուր իրավասության դատարանների կողմից, և առկա է եղել ձևավորված դատական պրակտիկա: Միաժամանակ ուսումնասիրված նյութերը ցույց են տալիս, որ 2021 թվականի ընտրությունների ընթացքում նույնաբովանդակ պահանջներով ներկայացված հայցերով դատարանները կայացրել են ընտրական իրավունքների վերականգնման վերաբերյալ որոշումներ:

Նշված դատական ակտերից հետո դիմողները կրկին փորձել են պաշտպանել իրենց իրավունքները դատական կարգով, սակայն, ըստ առաքելության կողմից ուսումնասիրված նյութերի, տարբեր դատարաններ հրաժարվել են վարույթ ընդունել ներկայացված դիմումները՝ հղում կատարելով տարբեր իրավական հիմնավորումներին:

Առաքելության տրամադրության տակ գտնվող տեղեկությունների համաձայն՝ ընտրողների ցուցակներում ընդգրկվելու նպատակով դատարան ներկայացված գործերի ընդհանուր թիվը կազմել է առնվազն 295, որոնցից միայն երեքն են վարույթ ընդունվել և քննվել ըստ էության:

Առաքելությունը չի իրականացնում դատարանների գործունեության իրավական գնահատում, սակայն արձանագրում է, որ տվյալ իրավիճակի արդյունքում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող Արցախից բռնի տեղահանված անձանց զգալի մասը փաստացի չի կարողացել իրացնել ընտրելու իրավունքը:

Ըստ տարբեր պաշտոնական և հանրային աղբյուրների՝ խնդիրը կարող էր վերաբերել շուրջ 60 հազար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների:

Առաքելության գնահատմամբ՝ ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի տեսանկյունից սա հանդիսանում է ընտրական գործընթացի ամենակարևոր համակարգային խնդիրներից մեկը, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե առանձին ընտրատեղամասերի կամ առանձին խախտումների, այլ ընտրողների մեծ խմբի՝ ընտրություններին մասնակցելու հնարավորության սահմանափակմանը:

Թեև ընտրությունների արդյունքների վրա տվյալ հանգամանքի կոնկրետ ազդեցության չափը ենթակա է առանձին իրավական և վիճակագրական գնահատման, առաքելությունը գտնում է, որ ընտրական իրավունքի իրացման հնարավորությունից փաստացի զրկված քաղաքացիների այս ծավալը չի կարող անտեսվել ընտրական գործընթացի ընդհանուր գնահատականի շրջանակում:

Առաքելությունը կոչ է անում իրավասու պետական մարմիններին և դատարաններին ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի,

անկախ իր բնակության վայրից, տեղահանման հանգամանքից կամ վարչական կարգավիճակից, ունենա ընտրական իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորություն։

8.3. Համակարգային բնույթի խախտումների գնահատական

Առաքելության կողմից արձանագրված բազմաթիվ դեպքեր առանձին վերցված կարող են չունենալ ընտրությունների արդյունքների վրա որոշիչ ազդեցություն։

Սակայն դրանց ամբողջությունը վկայում է ընտրական գործընթացում առկա համակարգային խնդիրների մասին։

Առաքելության գնահատմամբ՝ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը ձևավորվում է ոչ միայն քվեարկության օրվա կազմակերպմամբ, այլև ամբողջ ընտրական ցիկլի նկատմամբ քաղաքացիների վստահությամբ։

Վարչական ռեսուրսների օգտագործման, պետական չեզոքության, ընտրողների ազատ կամարտահայտման և քաղաքական հանդուրժողականության հետ կապված խնդիրները շարունակում են մնալ Հայաստանի ընտրական համակարգի հիմնական մարտահրավերներից։

8.4. Ընտրությունների արդյունքների նկատմամբ ազդեցության հարցը

ԵԱԴ «Արդար քվե» դիտորդական առաքելությունը չի իրականացնում ընտրությունների պաշտոնական արդյունքների վերահաշվարկ և չի կարող որոշակիորեն գնահատել, թե արձանագրված յուրաքանչյուր առանձին խախտումը ինչ չափով է ազդել ընտրությունների վերջնական արդյունքների վրա։

Միևնույն ժամանակ, ընտրական գործընթացի օրինականության և ընտրությունների արդյունքների արժանահավատության գնահատումը չի կարող սահմանափակվել առանձին խախտումների մեկուսացված ուսումնասիրությամբ։ Ժողովրդավարական ընտրությունների գնահատման հիմնարար մոտեցումն այն է, որ պետք է հաշվի առնվի խախտումների ամբողջությունը, դրանց տարածվածությունը, համակարգային բնույթը, կրկնվող դրսևորումները և ընտրողների ազատ կամարտահայտության ու քաղաքական մրցակցության վրա ունեցած համակցված ազդեցությունը։

Դիտորդական առաքելության կողմից արձանագրված նախընտրական, քվեարկության օրվա և հետընտրական փուլերում տեղի ունեցած խախտումների

ամբողջական գնահատումը ցույց է տալիս, որ դրանք կարող էին ունենալ էական ազդեցություն ընտրությունների վերջնական արդյունքների վրա, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում մանդատների բաշխման վրա:

Այս գնահատականի շրջանակներում առանձնահատուկ նշանակություն ունեն ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի խախտման հետ կապված հանգամանքները: Մասնավորապես, շուրջ 60,000 քաղաքացիների ընտրություններին մասնակցելու հնարավորության սահմանափակումը, ինչպես նաև երեք ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչման և վերաքվեարկության չնշանակման հետևանքով շուրջ 3,400 քաղաքացիների ձայների վերջնական արդյունքներից դուրս մնալը վերաբերում են քաղաքացիների լայն շրջանակի ընտրական իրավունքների իրականացմանը և ունեն ոչ միայն անհատական, այլև համապետական նշանակություն:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ երեք ընտրատեղամասերի արդյունքների անվավեր ճանաչման հետևանքները արտահայտվել են ոչ միայն տվյալ տեղամասերի ընտրողների ընտրական իրավունքի սահմանափակմամբ, այլև ազդել են Ազգային ժողովում մանդատների վերջնական բաշխման վրա: Այդ հանգամանքը բարձրացնում է ընտրական արդարության և ժողովրդական ներկայացուցչության լիարժեքության վերաբերյալ հիմնարար հարցեր:

Այսպիսով, դիտորդական առաքելությունը եզրակացնում է, որ արձանագրված խախտումների և հետընտրական որոշումների համակցված ազդեցությունը պետք է դիտարկվի որպես ընտրությունների վերջնական արդյունքների օրինականության և լեգիտիմության գնահատման առանցքային հանգամանք և ենթակա է ամբողջական իրավական, այդ թվում՝ սահմանադրաիրավական գնահատման:

8.5. Վերջնական եզրակացություն

ԵԱԴ «Արդար քվե» դիտորդական առաքելության կողմից իրականացված երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկումների, հավաքագրված փաստերի և հաղորդումների, ներկայացված դիմում-բողոքների, ընտրական գործընթացի իրավական գնահատման և հետընտրական զարգացումների ուսումնասիրության հիման վրա առաքելությունը եզրակացնում է, որ 2026 թվականի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունները չեն ապահովել ազատ, արդար, հավասար և լիարժեք վստահություն վայելող ընտրական գործընթացի համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ընտրական գործընթացի բոլոր փուլերում արձանագրվել են ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքներին առնչվող լուրջ խնդիրներ, մասնավորապես՝ վարչական ռեսուրսի լայնածավալ կիրառումը, պետական կառավարման համակարգի և իշխող

քաղաքական ուժի գործունեության սահմանների խաթարումը, ընտրողների կամարտահայտության վրա ազդեցության տարբեր ձևերը, ընտրակաշառքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումները, քաղաքական անհանդուրժողականության և ատելության խոսքի բարձր մակարդակը, քվեարկության գաղտնիության խախտումները, ընտրական հանձնաժողովների ոչ բավարար արձագանքը խախտումների նկատմամբ, ինչպես նաև ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի խախտումները:

Դիտորդական առաքելությունը ընդգծում է, որ նշված խախտումները չեն կարող գնահատվել առանձին և մեկուսացված կերպով: Դրանց տարածվածությունը, համակարգային բնույթը և ընտրական գործընթացի տարբեր փուլերում դրսևորումը հիմք են տալիս եզրակացնելու, որ դրանց համակցված ազդեցությունը կարող էր էական ազդեցություն ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում մանդատների բաշխման վրա:

Հատուկ մտահոգության առարկա են հանդիսանում այն հանգամանքները, որոնք ուղղակիորեն հանգեցրել են քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակմանը: Մասնավորապես, ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկված շուրջ 60,000 քաղաքացիների խնդիրը, ինչպես նաև երեք ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչումը՝ առանց վերաքվեարկության նշանակման, որի հետևանքով շուրջ 3,400 քաղաքացիների ձայները չեն ներառվել ընտրությունների վերջնական արդյունքներում, ունեն ոչ միայն անհատական, այլև համապետական նշանակություն և պահանջում են ամբողջական իրավական ու սահմանադրաիրավական գնահատում:

Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վերականգնումը պահանջում է ոչ միայն արձանագրված խախտումների լիարժեք և արդյունավետ քննություն, այլ նաև ընտրական համակարգի այնպիսի բարեփոխումներ, որոնք կապահովեն՝

• յուրաքանչյուր քաղաքացու ընտրական իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացումը,

• պետական մարմինների, պաշտոնատար անձանց և հանրային կառույցների իրական քաղաքական չեզոքությունը,

• վարչական ռեսուրսի օգտագործման կանխարգելման և պատասխանատվության արդյունավետ մեխանիզմների ստեղծումը,

• ընտրողների ազատ կամարտահայտության նկատմամբ ցանկացած ապօրինի ազդեցության, ներառյալ ընտրակաշառքի, ուղղորդման և ճնշման բացառումը,

• ընտրական հանձնաժողովների անկախության, մասնագիտական կարողությունների և հաշվետվողականության բարձրացումը,

• ընտրական վեճերի արագ, արդյունավետ և անկողմնակալ քննության ապահովումը,

• ընտրական գործընթացների առավելագույն թափանցիկությունը, հանրային վերահսկողությունը և քաղաքացիների վստահության վերականգնումը։

Դիտորդական առաքելությունը վերահաստատում է, որ ժողովրդավարական ընտրությունների նկատմամբ վստահությունը կարող է վերականգնվել միայն արձանագրված խախտումների նկատմամբ ամբողջական իրավական գնահատականի, պատասխանատվության արդյունավետ մեխանիզմների կիրառման և այնպիսի բարեփոխումների միջոցով, որոնք ապագայում կբացառեն նմանատիպ համակարգային խնդիրների կրկնությունը։

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին

1. Իրականացնել ընտրական օրենսդրության համապարփակ վերանայում՝ ապահովելով ընտրական իրավունքի համընդհանուրության սկզբունքի լիարժեք իրացումը և բացառելով այնպիսի իրավիճակները, որոնց արդյունքում Հայաստանի Հանրապետության որևէ քաղաքացի կարող է փաստացի զրկվել ընտրելու իրավունքից։
2. Օրենսդրական հստակ կարգավորումներ սահմանել այն դեպքերի համար, երբ ընտրատեղամասի արդյունքները ճանաչվում են անվավեր՝ նախատեսելով ընտրողների կամարտահայտության վերականգնման արդյունավետ մեխանիզմներ, ներառյալ՝ վերաքվեարկության նշանակման հստակ ընթացակարգեր։
3. Խստացնել ընտրական օրենսդրության խախտումների համար պատասխանատվության մեխանիզմները և ապահովել օրենքի հավասար կիրառումը բոլոր խախտողների նկատմամբ՝ անկախ նրանց պաշտոնական կամ քաղաքական կարգավիճակից։
4. Սահմանել առավել խիստ և հստակ կանոններ պաշտոնատար անձանց ընտրական գործընթացներին մասնակցության համար՝ բացառելով պաշտոնեական դիրքի և պետական ռեսուրսների օգտագործումը քաղաքական նպատակներով։

5. Ամրապնդել պետական և համայնքային ծառայողների քաղաքական չեզոքության երաշխիքները և նախատեսել արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ դրանց պահպանման համար։

6. Վերանայել ընտրական վեճերի քննության մեխանիզմները՝ ապահովելով արագ, արդյունավետ և իրական իրավական պաշտպանության միջոցներ, ներառյալ ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունեցող խախտումների ամբողջական դատական գնահատման հնարավորությունը։

9.2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Ներքին գործերի նախարարությանը

1. Վերանայել ընտրողների ցուցակների ձևավորման, ճշգրտման և հանրային վերահսկողության մեխանիզմները՝ բացառելով ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների մասնակցության անհիմն սահմանափակման հնարավորությունը։

2. Ապահովել ընտրական գործընթացի բոլոր փուլերի վերաբերյալ տվյալների առավելագույն հրապարակայնությունը, ներառյալ ընտրախախտումների, դիմում-բողոքների և դրանց քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը։

3. Մշակել և ներդնել ընտրողների ուղղորդման, ընտրողների նկատմամբ վերահսկողության և ընտրատեղամասերի հարակից տարածքներում ապօրինի ազդեցության կանխարգելման արդյունավետ մեխանիզմներ։

4. Ուժեղացնել ընտրական հանձնաժողովների անդամների ընտրության, վերապատրաստման և գնահատման համակարգերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց քաղաքական չեզոքությանը, քվեարկության գաղտնիության ապահովմանը և խախտումների նկատմամբ պատշաճ արձագանքին։

5. Ապահովել ընտրատեղամասերի կազմակերպման և տեխնիկական հագեցվածության այնպիսի չափանիշներ, որոնք ամբողջությամբ երաշխավորում են քվեարկության գաղտնիությունը և բացառվում են ընտրողի կամարտահայտության նկատմամբ վերահսկողության հնարավորությունները։

9.3. Իրավապահ մարմիններին

1. Ապահովել ընտրական իրավախախտումների վերաբերյալ բոլոր հաղորդումների արագ, արդյունավետ, ամբողջական և քաղաքականապես անկողմնակալ քննությունը՝ անկախ ենթադրյալ խախտում կատարողի պաշտոնական, քաղաքական կամ սոցիալական կարգավիճակից:
2. Ապահովել ատելության խոսքի, բռնության կոչերի, ընտրողների նկատմամբ ապօրինի ազդեցության և ընտրական այլ իրավախախտումների նկատմամբ օրենքով սահմանված պատասխանատվության հավասար կիրառումը:
3. Հրապարակել ընտրական իրավախախտումների վերաբերյալ հարուցված վարույթների, դրանց ընթացքի և կայացված որոշումների ամբողջական ու պարբերական վիճակագրություն՝ բարձրացնելով հանրային հաշվետվողականությունը և վստահությունը:

9.4. Դատարաններին և ընտրական վեճեր քննող մարմիններին

1. Ապահովել ընտրական գործերի արագ, արդյունավետ և անկախ քննություն՝ հաշվի առնելով ընտրական իրավունքների խախտման դեպքում իրավական պաշտպանության ժամանակին իրականացնելու անհրաժեշտությունը:
2. Ձևավորել ընտրական իրավունքի պաշտպանության միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա՝ հիմնված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային չափանիշների և ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքների վրա:
3. Հատուկ ուշադրություն դարձնել այն ընտրական վեճերին, որոնք վերաբերում են քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակմանը կամ կարող են ազդել ընտրությունների վերջնական արդյունքների և մանդատների բաշխման վրա:
4. Ընդլայնել դատական ակտերի հրապարակայնությունն ու մատչելիությունը՝ ապահովելով ընտրական արդարադատության նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:

9.5. Քաղաքական ուժերին

1. Հրաժարվել ընտրողների նկատմամբ վարչական, տնտեսական, աշխատանքային կամ այլ կախվածության գործոնների օգտագործումից և հարգել ընտրողների ազատ կամարտահայտության իրավունքը:

2. Ապահովել կուսակցությունների, թեկնածուների, վստահված անձանց և աջակիցների կողմից ընտրական օրենսդրության պահանջների խիստ պահպանումը։
3. Զերծ մնալ ատելության խոսքից, բռնության կոչերից, վիրավորանքներից և քաղաքական հակառակորդների արժանապատվությունը նսեմացնող հռետորաբանությունից՝ նպաստելով առողջ քաղաքական մրցակցության ձևավորմանը։
4. Ընտրական գործընթացի ընթացքում ծագած վեճերի դեպքում կիրառել օրենքով նախատեսված բոլոր իրավական միջոցները՝ ընտրական արդարության և հանրային վստահության վերականգնման նպատակով։

9.6. Հանրային հեռուստաընկերությանը և զանգվածային լրատվամիջոցներին

1. Ապահովել ընտրական գործընթացների բազմակարծիք, հավասարակշռված և փաստահեն լուսաբանում՝ բոլոր քաղաքական ուժերի նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքով։
2. Հատկապես Հանրային հեռուստաընկերությունը պետք է ապահովի հանրային ծառայության առաքելությունից բխող անաչառ, հավասարակշռված և հասարակության տարբեր քաղաքական դիրքորոշումները ներկայացնող հեռարձակում։
3. Նվազեցնել ապատեղեկատվության, մանիպուլյատիվ տեղեկատվության և ատելության խոսքի տարածման ռիսկերը՝ միաժամանակ հարգելով խոսքի ազատության հիմնարար իրավունքը։
4. Խթանել ծրագրային, բովանդակային և հանրային քաղաքականությունների վերաբերյալ քննարկումները՝ նպաստելով քաղաքացիների տեղեկացված ընտրությանը։

9.7. Քաղաքացիական հասարակության տեղական և միջազգային կազմակերպություններին

1. Շարունակել ընտրական գործընթացների անկախ, մասնագիտական և երկարաժամկետ դիտարկումը՝ ներառելով նախընտրական, քվեարկության, հետընտրական և դատական փուլերը։
2. Աջակցել ընտրական կրթության, քաղաքացիների իրազեկման և ժողովրդավարական մասնակցության ծրագրերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդներին, առաջին անգամ ընտրողներին և խոցելի խմբերին։
3. Ընդլայնել քաղաքացիների ներգրավվածությունը ընտրական վերահսկողության գործընթացներում, այդ թվում՝ ժամանակակից տեխնոլոգիական հարթակների, բաց տվյալների և հանրային հաշվետվողականության գործիքների միջոցով։
4. Շարունակել փաստահեն մշտադիտարկումը, ընտրական բարեփոխումների վերաբերյալ մասնագիտական քննարկումները և համագործակցությունը պետական մարմինների ու քաղաքական դերակատարների հետ՝ ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացման նպատակով։

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

<u>Դիտորդական առաքելության դիմումները ԿԸՀ-ին</u>

«Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ դիտորդական առաքելությունը ԿԸՀ է ներկայացրել 5 դիմում՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Դիմում —Մայիսի 12, 2026

Թեմա՝ Նախընտրական քարոզարշավի ընթացքում արձանագրված խախտումներ

- Նիկոլ Փաշինյանը վարչապետի պաշտոնական Facebook էջումհրապարակումներ է կատարել քարոզչական բովանդակությամբ (վարչական ռեսուրսի օգտագործում)

- Նույն կերպ վարվել են առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը և աշխատանքի նախարար Արսեն Թորոսյանը

- Մայիսի 9-ին Փաշինյանը առանց սեփականատերերի համաձայնության քարոզչական նյութեր է փակցրել բնակելի տների դարպասներին

- «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության թեկնածու Սուրեն Պետրոսյանի պաստառը փակցված է բազմաբնակարան շենքի արտաքին պատին՝ վճարովի գովազդային վահանակների բացակայության պայմաններում

2. Դիմում — մայիսի 13, 2026

Թեմա՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից ընտրական գործընթացում «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կազմում դիտորդական առաքելություն իրականացնելու համապատասխանության հարցին՝ Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջների տեսանկյունից:

- «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը /ինչպես նաև «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի մեկ այլ ներկայացուցիչ/ ներգրավված է Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմում, որը ձևավորվել է գործադիր իշխանության ղեկավարի՝ վարչապետի որոշմամբ: Հաշվի առնելով, որ վերջինս գլխավորում է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից մեկի ընտրական ցուցակը, ապա տվյալ հանգամանքը կարող է շահերի բախման և անկողմնակալության վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցել:

- կազմակերպությունը հանդես է եկել հրապարակային քաղաքական դիրքորոշումներով՝ միանալով հասարակական կազմակերպությունների հայտարարությանը, որը պարունակում է քաղաքական գնահատականներ և պահանջներ պետական կառավարման համակարգի վերաբերյալ: Սա վկայում է, որ կազմակերպությունը ներգրավված է հանրային քաղաքական օրակարգի ձևավորման գործընթացում:

3. Դիմում - Մայիսի 18, 2026

Թեմա՝ Վարչական ռեսուրսի օգտագործում և անվայելուչ արտահայտություններ

- Նիկոլ Փաշինյանը հանրահավաքի ժամանակ հայտարարել է, որ ԱԱԾ-ն մտնելու է քննչական կոմիտե մրցակցի նկատմամբ վարույթ նախաձեռնելու համար

- Հայտարարել է Գագիկ Ծառուկյանից ցեմենտի գործարանը խլելու մտադրության մասին
- Մայիսի 18-ին հանրահավաքի ժամանակ հնչեցրել է «կզացնելու եմ», «սատկացնելու եմ»արտահայտությունները ՀՀ 2-րդ նախագահի, 3-րդ նախագահի, Ծառուկյանի և Սամվել Կարապետյանի հասցեին

4. Դիմում — Հունիսի 7, 2026

Թեմա՝ Ընտրությունների օրը արձանագրված խախտումներ

- Գրանցամատյանում գրառումների մերժում (տեղամասեր 7/4, 7/32, 8/46, 10/12)
- Դիտորդների իրավունքների սահմանափակում (տեղամասեր 8/14, 10/12)
- Քվեարկության կարգի խախտումներ՝ կնիքի բացակայություն, թանաք թափվածություն, ավելորդ թերթիկների ոչնչացում (8/7, 8/12, 8/46, 9/53)
- Գրանցման խախտումներ՝ անձնագրի պատճենով քվեարկության արգելք (7/18), հերթերի կուտակում (10/36)

5. Դիմում — Հունիսի 7-ից հետո

Թեմա՝ Ընտրական գործընթացի լեգիտիմությունը խաթարող հանգամանքներ

Նույն օրվա խախտումների ամփոփիչ և ավելի մանրամասն ներկայացում, ընդ որում ընդգծվում է, որ խոսքը պատահական թերացումների չէ, այլ հետևողական գործողությունների մասին։ Ներկայացված են պահանջներ՝

- 8/46 տեղամասի կնիքի բացակայության հարցի քննություն
- 10/12 և 22/17 տեղամասերի նախագահների պատասխանատվության ենթարկում
- 9/53 տեղամասի քվեաթերթիկների բաշխման ստուգում

Ամփոփում.

Դիտորդական առաքելությունը դիմումներ է ներկայացրել ինչպես նախընտրական շրջանում (մայիս 2026) — վարչական ռեսուրսի չարաշահման և քարոզչական կանոնների խախտումների վերաբերյալ, այնպես էլ ընտրությունների օրը (հունիսի 7) — ընտրատեղամասերում դիտորդների իրավունքների սահմանափակման և ընթացակարգային կոպիտ խախտումների վերաբերյալ։

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԱՐԴԱՐ ՔՎԵ» ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԵԴԻԱ ԱՐՇԱԳԱՆՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ժամանակահատված՝ 2026 թվականի մայիսի 5 – հունիսի 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում «Արդար քվե» դիտորդական առաքելությունը հանդես եկավ որպես երիտասարդական քաղաքացիական վերահսկողության կարևոր նախաձեռնություն՝ իրականացնելով ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ դիտարկում: Մեդիա դաշտում առաքելության գործունեությունն արտացոլվել է մի քանի հիմնական ուղղություններով՝

- առաքելության մեկնարկի և դիտորդների հավաքագրման լուսաբանում,
- ընտրախախտումների գրանցման թվային գործիքների ներկայացում,
- քարոզարշավի ընթացքում արձանագրված խնդիրների հանրայնացում,
- ընտրության օրվա մշտադիտարկման արդյունքների ներկայացում,
- ընտրություններից հետո եզրակացությունների և առաջարկությունների հրապարակում:

1. ՄԵԴԻԱ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

I փուլ. Առաքելության ներկայացում և հանրային ճանաչելիության ձևավորում (մայիսի 5-19)

Այս փուլում հրապարակումները հիմնականում ներկայացրել են.

- «Արդար քվե» առաքելության նպատակները,
- դիտորդների պատրաստման գործընթացը,
- երիտասարդների ներգրավումը ընտրական վերահսկողության մեջ,

- ընտրախախտումների գրանցման նորարարական հարթակների ստեղծումը:

Մայիսի 8-ին հրապարակված նյութում ներկայացվել է, որ առաքելությունը նախատեսում է ներգրավել հարյուրավոր պատրաստված դիտորդների Հայաստանի տարբեր մարզերից:

Մայիսի 19-ին կազմակերպված ասուլիսը դարձել է լրատվամիջոցների հետաքրքրության հիմնական թեման, որտեղ ներկայացվել են youthvote.live հարթակը, թեժ գիծը և դիտորդների ուսուցման մեթոդաբանությունը:

II փուլ. Քարոզարշավի մշտադիտարկում (մայիսի 19 – հունիսի 6)

Այս ժամանակահատվածում հրապարակումների բովանդակությունը դարձել է առավել փաստահեն:

Մեդիա հրապարակումներում ներկայացվել են.

- վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումներ,
- քարոզչության կանոնների խախտումներ,
- անչափահասների ներգրավման դեպքեր,
- պետական և կուսակցական ռեսուրսների տարանջատման խնդիրներ:

Լրատվամիջոցներում առանձնահատուկ արձագանք են ստացել առաքելության կողմից ներկայացված գնահատականները վարչական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ:

III փուլ. Ընտրության օր և հետընտրական շրջան (հունիսի 7 – հունիսի 15)

Հրապարակումների հիմնական թեմաներն էին.

- ընտրական խախտումների օպերատիվ արձանագրում,
- youthvote.live հարթակում գրանցված դեպքերի ներկայացում,
- դիտորդների գործունեության արդյունքները,
- ԿԸՀ որոշումների վերաբերյալ գնահատականները:

Հունիսի 7-ի դրությամբ հրապարակվել է, որ youthvote.live հարթակում գրանցվել է 671 դեպք:

Հետընտրական փուլում հրապարակվել են առաքելության եզրակացությունները և գնահատականները ընտրական գործընթացի վերաբերյալ:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԴԻԱ ՆԱՐԱՏԻՎՆԵՐԸ

Վերլուծությունը ցույց է տալիս, որ «Արդար քվե» առաքելության շուրջ ձևավորվել են հետևյալ հիմնական նարատիվները.

Ա. Երիտասարդական մասնակցություն և քաղաքացիական վերահսկողություն

Հրապարակումների զգալի մասը ներկայացրել է առաքելությունը որպես երիտասարդների ներգրավման հաջող օրինակ ընտրական գործընթացներում։

Բ. Թվային նորարարություն

youthvote.live հարթակի ստեղծումն ու կիրառումը դարձել են առաքելության ամենաշատ լուսաբանված նախաձեռնություններից մեկը։

Գ. Ընտրախախտումների հանրայնացում

Լրատվամիջոցները լայնորեն անդրադարձել են առաքելության կողմից ներկայացված խախտումների վերաբերյալ տեղեկություններին։

Դ. Դիտորդական առաքելությունների անկախության հարց

Առանձին հրապարակումներ վերաբերում էին դիտորդական առաքելությունների անկախության և քաղաքական չեզոքության վերաբերյալ բարձրացված խնդիրներին։

3. ՄԵԴԻԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Ուժեղ կողմեր

• Ստեղծվել է ճանաչելի բրենդ։

• Հանրությանը ներկայացվել են կոնկրետ փաստեր և վիճակագրություն։

• Ապահովվել է օպերատիվ տեղեկատվական հոսք։

• Ներդրվել են թվային գործիքներ։

• Ակտիվ համագործակցություն լրատվամիջոցների հետ։

4. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հանրային դաշտում արձանագրված տվյալների համաձայն՝

• 368 դիտորդ,

• հարյուրավոր վերապատրաստված կամավորներ,

• 671 արձանագրված դեպք,

• առանձին հրապարակումներում ներկայացված 287 հրապարակային գրանցում,

• բազմափուլ մամուլի ասուլիսներ և հայտարարություններ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի ընտրական գործընթացի ընթացքում «Արդար քվե» դիտորդական առաքելությունը կարողացել է ձևավորել տեսանելի և ազդեցիկ հանրային ներկայություն։ Մեդիա լուսաբանումները հիմնականում կենտրոնացել են դիտորդական գործունեության, ընտրախախտումների փաստագրման և նորարարական թվային լուծումների վրա։ Հատկապես youthvote.live հարթակը դարձել է առաքելության հանրային ճանաչելիության առանցքային գործիքը։

Ընդհանուր գնահատմամբ՝ առաքելությունը կարողացել է հանդես գալ որպես երիտասարդական քաղաքացիական վերահսկողության կարևոր դերակատար և ձևավորել կայուն մեդիա ներկայություն ինչպես նախընտրական, այնպես էլ ընտրական և հետընտրական փուլերում։

1. https://www.aravot.am/2026/05/25/1559181/
2. https://www.facebook.com/people/%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%90-%D5%94%D5%8E%D4%B5-%D5%A4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%A1%D6%84%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/61560533415483/
3. https://arminfo.info/full_news.php?id=100877&lang=1
4. https://yerevan.today/ays-pahin-vowghigh-ardar-khve-ditordakan-arakheluthyan-asuliseh/
5. https://www.youtube.com/watch?v=55nZtyNtNXw
6. ՈՒՂԻՂ. «Արդար ՔՎԵ» դիտորդական առաքելության մամուլի ասուլիսը
7. Անչափահասներին են ներգրավում բարոզարշավին. «Արդար բվե» դիտորդական առաքելություն
8. https://yerevan.today/ays-pahin-vowghigh-ditordneri-asuliseh%D5%9D-kharozarshavi-veraberyal/
9. «Արդար ՔՎԵ» դիտորդական առաքելության ասուլիսը.ՈՒՂԻՂ
10. https://www.youtube.com/watch?v=KjP61dlNA98
11. https://news.am/hy/video/1036577

12. https://24news.am/nerkin-kyank/536798/
13. Ընտրությունների օրվա երկրորդ կեսի դիտարկումների ամփոփում. «Արդար Քվե»
14. https://www.youtube.com/watch?v=hj8ISmEciKY
15. https://www.aravot.am/2026/05/21/1558348/
16. https://a1plus.am/hy/article/502879
17. «Արդար ՔՎԵ» դիտորդական առաքելությունը կոչ է անում քաղաքական բոլոր ուժերին համատեղ նպաստել ընտրական գործընթացի թափանցիկությանը
18. https://www.facebook.com/FYCANGO/photos/%EF%B8%8F-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%A2%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A4%D5%A1%D5%B7%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80-%D6%84%D5%BE%D5%A5-%D5%A4%D5%AB%D5%BF%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%A1%D6%84%D5%A5%D5%AC/1388614209963312/
19. https://www.youtube.com/watch?v=IjCFaapwdWQ
20. https://www.aravot.am/2026/06/07/1561803/
21. https://www.instagram.com/p/DYtjCGWMqvU/
22. https://www.youtube.com/watch?v=KjP61dlNA98
23. https://alphanews.am/anchapahasnerin-en-nergravoum-qaroza/
24. Ճնշում, ապօրինի բարոզչություն և միջամտություններ. «Արդար Քվեի» նոր ահազանգերը ընտրատեղամասերից - NEWS.am
25. https://abnews.am/post/inc-xaxtumner-en-arjanagrvel-entrategamaserum-zame-1300-ic-1600-i-zamanakahatvacum
26. https://lrahos.com/tag/%D6%84%D5%A1%D6%80%D5%B8%D5%A6%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/
27. https://yerevan.today/ays-pahin-vowghigh-ditordneri-asuliseh%D5%9D-kharozarshavi-veraberyal/
28. https://kizaket.am/news/961282
29. https://newspress.am/?p=271915&l=am
30. https://vesti.am/post/396902/am

31. Press24.am | Ընտրախախտումների ահազանգերը՝ բարոզարշավի առաջին փուլում
32. https://www.1or.am/?p=200316&l=en
33. https://arm.sputniknews.ru/20260519/qarvozarshavum-71-khakhtman-ahazang-e-stacel--mets-masy-veraberum-e-qp-in-ardar-qve-102345789.html
34. https://tribune.am/qaghaqatsinery-karvogh-en-yntrakhakhtumneri-masin-haytnel-onlayn/
35. https://a1plus.am/hy/article/503019
36. https://tert.am/am/news/2026/05/19/monitoring-electionss/4271161
37. «Արդար ՔՎԵ»-ն կոչ է անում քաղաքական ուժերին նպաստել ընտրական գործընթացի թափանցիկությանը
38. Ճնշում, ապօրինի քարոզչություն և միջամտություններ. «Արդար Քվեի» նոր ահազանգերը ընտրատեղամասերից
39. «Արդար ՔՎԵ»-ն կոչ է անում քաղաքական ուժերին նպաստել ընտրական գործընթացի թափանցիկությանը – ԱՄԲԻՈՆ NEWS
40. «Արդար ՔՎԵ»-ն կոչ է անում քաղաքական ուժերին նպաստել ընտրական գործընթացի թափանցիկությանը
41. «Արդար քվե» առաքելություն. Նման երևույթները կասկածի տակ են դնում ընտրությունների արդյունքների լեգիտիմությունը (ՏԵՍԱՆՅՈՒԹ) – ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ
42. Ճնշում, ապօրինի քարոզչություն և միջամտություններ. «Արդար Քվեի» նոր ահազանգերը ընտրատեղամասերից – ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻԻ
43. «Արդար քվե» դիտորդական առաքելության ասուլիսը. ՈՒՂԻՂ - Alphanews
44. Մամուլի ասուլիս. «Արդար քվե»-ն կներկայացնի արձանագրված ընտրախախտումները – ԱՄԲԻՈՆ NEWS
45. (8) Facebook
46. InfoPort - եղիր տեղեկացված
47. «Սա վարչական ռեսուրսի չարաշահում ենք դիտարկում, հատկապես, որ դրանում ներառվում է նաև անչափահասների շրջանակը».Առավոտ
48. https://tribune.am/lrahos/qaghaqakanutyun/
49. https://hraparak.am/am/post/58ee57b27bfa6cdeb68febe1c313f8cb
50. https://www.aravot.am/2026/06/07/1562050/
51. Երիտասարդական ակումբների դաշնության «Արդար ՔՎԵ» դիտորդական առաքելությունը ժողովրդավարության պահապան - Orer
52. «Սա վարչական ռեսուրսի չարաշահում ենք դիտարկում, հատկապես, որ դրանում ներառվում է նաև անչափահասների շրջանակը». «Առերեսում»
53. https://hraparak.am/am/post/c3f1a0cd21378a2a6e9933c1c65fad4c
54. https://www.aravot.am/2026/05/19/1557800/
55. Արձանագրված խնդիրների զգալի մասը վերաբերում է հենց քվեարկության ընթացքին. «Արդար քվե»
56. Ընտրական պրոցեսում ատելության խոսքը տարածվում էր հենց իշխանությունների կողմից. Աստղիկ Ավետիսյան

57. Շատ են եղել զանգերը հարեւան–բարեկամ ընտանիքի անդամների միջեւ կռիվների հետ կապված. Աստղիկ Ավետիսյան
58. Շատ են եղել զանգերը հարեւան–բարեկամ ընտանիքի անդամների միջեւ կռիվների հետ կապված. Աստղիկ Ավետիսյան
59. ՔՊ-ից ասել են՝ դե հեսա կտեսնեք ինչ կլինի. Ավետիսյան
60. Շատ են եղել զանգերը հարեւան–բարեկամ ընտանիքի անդամների միջեւ կռիվների հետ կապված. Աստղիկ Ավետիսյան
61. Անչափահասներին են ներգրավում քարոզարշավին. «Արդար քվե» դիտորդական առաքելություն
62. Ըստ դիտորդների՝ վարչական ռեսուրսը չարաշահվել է. Սոնյա Համբարձումյանի և Գրիգոր Ջանիկյանի «Առերեսումը»

2026թ հունիսի 17-ի դրությամբ, որովհետև ԶԼՄ-երի արձագանքները շարունակվում են...